

11-12(369-370)

02.05.2014

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինասարությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԵՍՐՈՂՅԱՆ ԳՐԵՐԸ` ՀԱՎԵՐԺԻ ԱՆՅԱԳԻՐ

Հանրապետության դպրոցներում այս օրերին անցկացվում են Այբուբենի տոնին նվիրված հետաքրքիր միջոցառումներ: Ասել է թե՛ մաշտոցյան հզոր բանակին զինվորագրվեցին նորանոր նվիրյալներ, ովքեր այսուհետև ոչ միայն կկարողանան վարժ կարդալ ու գրել ոսկեդեմիկ հայերենով, այլև նրանցից յուրաքանչյուրը կդառնա Մեծն Մաշտոցի դեսպանը:

Ապրես հայրենիքում, թե այլուր՝ եթե դու հայ ես, պետք է իմանաս հայոց այբուբենը, քանզի մայրենի լեզվի իմացությամբ է հաստատվում ազգային պատկանելությունը: Էլ ինչ հայ, եթե չի խոսում ու կարդում իր մոր աղոթած լեզվով: Ցավոք, հայ ժողովրդին վիճակված չէ ամբողջական ապրել իր



հայրենիքում. ճակատագիրը դաժան է գտնվել այս հինավուրց ազգի նկատմամբ: Եվ նրանց համար, ովքեր ճակատագրի կամոց այսօր ապրում են նախնիների բնօրրանից հեռու, հոգևոր հայրենիք է դառնում հենց մայրենի լեզուն:

Իրենց գծապատկերային ու հնչողական յուրահատկությամբ ուրիշ ժողովուրդների այբուբենից տարբերվող հայոց գրերն ավելի քան 1600 տարի եղել են հայի ինքնուրույն գրավակաճ, թեև տվել շինականին ու գորավարին՝ ում ուսերին է միշտ եղել երկիրը պահելու և պաշտպանելու բեռը: Եվ ազգին պատուհասված բազում փորձություններին կարողացել ենք դիմագրավել, թերևս, մեր ինքնության վկա՝ մեսրոպյան գրերի գորավոր ուժով:

Արդեն ավանդական է դառնում նաև Այ-

բուբենի տոնը Ամարասուն անցկացնելը: Մաշտոցն այստեղ առաջին դարատունը բացելով՝ հավերժի անցագիր է տվել իր հետևորդներին: Ամարասի վանքի սուրբ կամարների տակ կրկին հնչեցնելով հայոց այբուբենը, մեր մանուկները յուրովի երդում տվեցին՝ հավատարիմ մնալ գրերը ստեղծողի սուրբ պատգամներին:

Ամարասի վանքում, թե հարազատ դպրոցում, մեկ է, մաշտոցյան ոգին է անպայման թևածում այդտեղ՝ հպարտությամբ լցնելով այբբեն-գիմ-ը խրոխտ արտասանող մանուկների, նրանց ուսուցիչների ու ծնողների սրտերը:

Կանաչ ճանապարհ մաշտոցյան նոր դեսպաններին:

«ԼՍԱՐԱՐ»

ԱՐԱՔՍԱԿԱՆՈՒՄ

Հաղորդի շրջանի հարավում արդեն երկրորդ տարին է, ինչ հիմնվել է նոր բնակավայր Արաքսավանը, որն էլ դարձել է Արցախի Հանրապետության իշխանությունների հայրենամակեր ու պետականաշինական ծրագրերից մեկի հիմքը: Արաքսամերձ այս բնակավայրում տեղադրված ժամանակավոր տնակներում բնակություն են հաստատել 30-ից ավելի ընտանիքներ՝ հիմնականում երիտասարդներ: Այստեղ ապրիլի 26-ին կայացավ երիտասարդական կազմակերպությունների միացյալ միջոցառում, որին մասնակից եղան Արցախի Հանրապետության ղեկավարությունը՝ Նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ, ՀՀ գլխավոր դատախազ Պարոյան Կոստանյանը, այլ պաշտոնյաներ ու հյուրեր: Արցախի բոլոր շրջաններից, Ստեփանակերտից Արաքսավան էին եկել շուրջ 500 երիտասարդներ: ԼՂՀ ՄԵ հարցերի փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանն ասաց, որ միջոցառմանը մասնակից են Արցախում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների և բոլոր կուսակցությունների երիտասարդական թևերի ղեկավարներ ու անդամներ, ուսանողներ տարբեր բուհերից: ՀՀ ազգային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն Վահրամ Հայրապետյանը տեղեկացրեց, որ իր ղեկավարած բուհից մոտ 120 ուսանող է այցելել Արաքսավան: Շուտով արցախցի իրենց հասակակիցներին միացան նաև ՀՀ Սյունիքի մարզի շուրջ 200 երիտասարդներ մարզպետ Վահե Հակոբյանի գլխավորությամբ՝ Սիսիանից, Գորիսից, Կապանից, Քաջարանից... Ներկաներին ողջունեց ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը: Կարևորելով հանրապետության հարավային երկու շրջանների՝ Հաղորդի և Քաջաթաղի ռազմավարական մեծ նշանակությունը՝ նա ասաց, որ այս տարածքներում հատուկ ծրագիր է իրականացվելու, հիմնվելու են բնակավայրեր՝ իհարկե, դպրոցներով հանդերձ:

տասարդությունից: Այստեղ ենք, որ փառաբանենք նրանց, ովքեր իրականացնում են մարտական հերթափոխ, խոնարհվելու այն ծնողների առաջ, ովքեր հայրենիքին զինվոր են տվել: Հիմք դնելով Արաքսավանին և նման բնակավայրերին՝ մասնակցում ենք զինվորների ծառայությունը հեշտացնելուն:

Երկրի ղեկավարն ավելացրեց՝ եթե երիտասարդությունը զգա ծրագրի կարևորությունն ու հրատապությունը և պատրաստ լինի ակտիվորեն ներգրավվել դրանում, ապա ցանկացած խնդիր կարող է հաջողությամբ լուծվել: Նախագահ Սահակյանը վստահություն հայտնեց, որ մատաղ սերունդն ի վիճակի է շարունակել ավագների գործը և ունի անսպառ եռանդ, հայրենասիրական ոգի ու համախմբված է հայրենիքին սատար լինելու, նրա պայծառ ապագան կերտելու սուրբ գաղափարի շուրջ և բարի երթ մարդեց այս սրբազան ուխտին:

ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանն իր խոսքում սկզբում ներկայացրեց արաքսավանցիների խնդրանքը՝ ողջունել ներկաներին: Դիմելով երիտասարդությանը՝ փոխվարչապետը նշեց, որ այստեղ են ծանոթանալու ԼՂՀ իշխանությունների ռազմավարական ծրագրերին: Այնուհետև տեղեկացրեց, որ տարածքն ազատագրվել է 1993 թվականի աշնանը, և այսօր Հայոց բանակը պաշտպանում է մեր անդրորդը: Ա. Աղաբեկյանը նույնպես կարևորեց Արցախի հարավային շրջանների հողատարածքների օգտագործումը, դրանց՝ մեր ժողովրդին ծառայեցնելը, մեր բանակին օժանդակելը: Նա տեղեկացրեց նաև, որ այս տարածքում արդեն անցկացվել են մոտ 50 կմ հոսանքագիծ, 40 կմ ռոտզման ջրատար, «Գյուղատնտես» ՍՊԸ-ն իրականացնում է հողատարածքների մաքրման աշխատանքներ: Անդրադարձավ նաև Արաքսավանի խնդիրներին՝ ասելով, որ ստեղծվում են բոլոր պայմանները, որ բնակիչներն այստեղ ապրեն ապահով: ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը տրամադրում է վարկեր՝ հողատարածքներ մշակելու նպատակով: Արդեն 1000 հեկտարից ավելի ցանքս է կատարվել, կառուցվող գործարանը 2014թ. կարտադրի էկոլոգիապես մաքուր պահածոներ, հատկապես՝ տոմատի մածուկ: Այս նպատակով արտադրվելու են նաև մեծ քանակությամբ լոլիկ, սմբուկ, պղպեղ: Ա. Աղաբեկյանը տեղեկացրեց, որ շարունակվում է օժանդակությունը հողօգտագործողներին, և կա ծրագիր՝ տարածքում մինչև 10000հա հող մշակել:

- Շուտով Արաքսավանում կգործի խանութ, իսկ տարիներ անց այստեղ կհառնի տիպիկ հայկական բնակավայրը, - խոսքը եզրափակեց ԼՂՀ փոխվարչապետը:

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, ողջունելով ներկաներին, ասաց, որ երիտասարդների նման հանդիպումը նախատեսված էր դեռևս մարտին, երբ Սիսիանում խոստացել էր կազմակերպել սյունեցի երիտասարդների այցն Արցախ: Առաջարկը ողջունել էր ԼՂՀ Նախագահը, և ահա՛ այն դարձել է իրականություն: Վ. Հակոբյանն ասաց նաև, որ այս հանդիպումով մեր պատմական անցյալին նոր էջ ենք գրում: Նա առաջարկեց նման հանդիպում իրականացնել Սյունիքում:

Ողջույնի խոսք ասաց ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկան, «Գուրգեն Մե-

մենք շատ անելիք ունենք:

Դիմելով երիտասարդությանը և ներկա զինվորներին՝ նա շարունակեց.

- Ամենահզոր ուժը դուք եք. այս հողը հային կարոտ էր, և մենք արդեն այստեղ ենք, մայր հողի վրա: Ինչպես գիտենք, մայր հողի վրա մարդը տասնապատիկ և ավելի հզոր է, ուժեղ: Այնուհետև սրբազանը կարևորեց տարածքի գյուղատնտեսական նշանակությունը, որը կարող է ապահովել պարենային անվտանգությունը: Իր ելույթը Պարզև սրբազանն ավարտեց Տերունական աղոթքով՝ դիմելով առ Աստված, որ զորավիճ լինի մեր նոր ուխտին: Այնուհետև Արաքսավանում տնկվեց երեք ընկուզենի, որ խորհրդանշում է մեր եռամիությունը:

Սահմանապահի օրվա առթիվ ներկա սահմանապահներին ողջունեց և շնորհավորեց ԼՂՀ Նախագահը՝ մարդեղով առողջություն, զգոնություն, հիշեցնելով, թե որն է սահմանապահի առաքելությունը: Հանդիսավոր մասից առաջ ու հետո հարյուրավոր հայ երիտասարդները միասին պարեցին հայոց «Քոչարին», ազգագրական ու ռազմական այլ պարեր: Նրանց պարն այնքան ոգևորող էր, որ շուտով պարողների շարքերը համալրեցին Նախագահն ու նրան ուղեկից պաշտոնյաները, հյուրերը: Ներկաներին իրենց երգերով ոգևորեցին ԼՂՀ պաշտպանության բանակի «Ասպետ» համույթի երգիչներն ու երաժիշտները: Օրն ավարտվեց հավատով ու հպարտությամբ: Հարյուրավոր հայ երիտասարդներ միավորվել էին սուրբ արյամբ ազատագրված ու արդեն շենացող ու ծաղկող հայոց ոստանում՝ Մայր Արաքսի ափին և ուխտեցին միշտ լինել միասնական, խոստացան տեղ մնալ հայ հայրենիքին: Նաև ծանոթացան, բարեկամացան, նոր ընկերներ ձեռք բերեցին:

Միջոցառմանը Քաջաթաղի շրջանից մասնակցում էին մոտ 60 երիտասարդներ և շրջվարչակազմի ներկայացուցիչներ՝ վարչակազմի ղեկավար Սյունի խաչատրյանի գլխավորությամբ: Տուն վերադառնալիս սյունեցիները կանգ առան Քաջաթաղի շրջանի Աղածոր գյուղում, որտեղից ճանապարհները տանում են Կապան, Գորիս, Սիսիան: Այստեղ ևս պարեցին սյունեցի երիտասարդները իրենց մարզպետի հետ: Զրույցի ընթացքում Վահե Հակոբյանն ասաց.

- Հանդիպումն ստացվեց, հավատում են, որ երիտասարդությունը մեր ծրագրերի իրականացումն է: Պետք է հզորացնենք մեր տնտեսությունը, օգտագործենք մեր առավելությունները՝ զարգացնելու մեր երկիրը, - հավելելով, որ կապը Արցախի և Սյունիքի հետ պետք է ավելի զարգացնենք, ավելի շատ նման հանդիպումներ իրականացնենք: Բարի ճանապարհ մարդեցինք մեր հայրենակիցներին՝ հավատով, որ միասնությամբ ու երկիրը շենացնելով կստիպենք աշխարհին ճանաչել Արցախը:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ



լիքյանը՝ Քաջաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամի նախագահ Գուրգեն Մելիքյանը:

- Մենք Մայր Արաքսի ափին ենք, որը մեզ բաժանում է մեր պատմական հայրենիքից: Կանգնած ենք ազատագրված հողի վրա, որը պղծված էր տարիներ առաջ, քանի որ թշնամին էր տեղ այստեղ, - ասաց բարեգործը և, դիմելով երիտասարդությանը, շարունակեց, - դուք պետք է սրբագործեք այս հողը, որը երբեք թշնամուն չենք տա:

Գ. Մելիքյանը կարևորեց միասնությունը, որն էլ կծնի հաղթանակ և առաջընթաց և հավեց, որ մեր թշնամիներն ամեն ստորության գնում են՝ պատակտելու մեր ժողովրդին, ուստի չպետք է տարբերակենք հայաստանցի, արցախցի, սիրիացի ու այլ -ացիներ, բոլորն ունեն մեկ անուն՝ ՀԱՅ:

Երիտասարդության անունից ներկաներին ողջունեցին և՛ Արցախի, և՛ Սյունիքի ներկայացուցիչները՝ վստահեցնելով, որ հայ երիտասարդությունը հուսախաբ չի անի:

Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև սրբազանը, դիմելով ներկաներին, ասաց.

- Եկել ենք ուխտի. այստեղ սրբազան արյուն է թափվել: Տղաները հաղթեցին, իսկ այժմ

- Լայնածավալ համապետական ծրագրերի իրականացումը մեծապես կախված է երի-

ԶԻՆԱԴԱՂԱՐ-20

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱՂԱԴԱՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ

ԱրՊՀ և ԵՊՀ ուսանողական կառույցների միջև անցյալ տարի նույն-բերին ստորագրված հուշագրի և ընթացիկ տարվա ապրիլի 16-ին երկու համալսարանների միջև կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակներում ապրիլի 26-ին Արցախի պետական համալսարանում կազմակերպվեց ուսանողական միջբուհական գիտաժողով՝ նվիրված Արցախյան պատերազմի զինադադարի հաստատման 20-ամյակին՝ «Պատերազմի և խաղաղության 20 տարի» խորագրով:



Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և հաջողություններ մաղթեց Արցախի պետական համալսարանի ռեկտոր Մանուշ Սինայանը: Զինադադարի հաստատման 20-րդ տարեդարձին նվիրված նման միջոցառումը, ինչպես ասաց ԱրՊՀ ռեկտորը, պահանջված ու կարևոր է այսօրվա մասնակիցների համար, քանզի նրանք այն սերունդն են, ովքեր ծնվել են պատմական այդ իրադարձությունից հետո: «Կարևոր է, որ մեր սերունդը հիշի ոչ միայն հայ ժողովրդի պատմության լավագույն էջերը, այլև սերտի մեր պայքարի դասերը, որտեղ իր ուրույն դերակատարությունն ունի Արցախյան պատերազմի զինադադարը»: Բայց Արքեբեջանը շարունակում է իր հայապայք քաղաքականությունը, շարունակում

է օգտագործել միջազգային բոլոր ատյանները՝ պատմական փաստերը խեղաթյուրելու, Հայաստանին ազդե-տոր ճանաչելու և իրեն որպես զոհ ներկայացնելու համար: Սակայն, ի հեճուկս մեր թշնամու, Արցախն ունի

յունավետ աշխատանք մաղթեց փոխնախարար Արմեն Սարգսյանը: Նա նշեց, որ վերջին տարիներին ՀՀ և ԼՂՀ բուհերում կատարված բարեփոխումների մեջ նկատելի է ուսանողու-թյան՝ համալսարանի կառավարման և ընդհանրապես, նրա գործունեության մեջ մեծ ընդգրկում ունենալը: Նշանակալից է և այն հանգամանքը, որ իշխանությունների կողմից ջանքեր են գործադրվում ուսանողներին ներգրավելու նաև տնտեսության կազմակերպման գործընթացում: Դրան է նպաստակառուցված նույն այդ օրը ՀՀ և ԼՂՀ շուրջ 700 ուսանողների այցելությունը մեր ազատագրված պատմական հողերը՝ Արաքսի հովիտ՝ տեղում ծանոթանալու ծավալվող գյուղատնտեսական աշխատանքներին և, ինչու չէ, գուցե հետագայում իրենք նախաձեռնելու նման աշխատանքներ: Փոխնախարարը կարևորեց բուհերի ուսումնական խորհուրդներին կից ուսանողական գիտական ընկերությունների ստեղծումը, որով հիմք է դրվում ապագա գիտնականների գործունեությանը:

Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սամվել Մուրադյանի ելույթը յուրօրինակ դասախոսություն

էր այն մասին, որ թեպետ զինադադար է հայտարարվել, սակայն թշնամին բոլոր բնագավառներում շարունակում է իր ստոր, զավթողական քաղաքականությունը: Նա մասնավորաբար օրինակներ բերեց գրականու-թյունից:

Գիտաժողովի մասնակիցներին հաջողություններ մաղթեց ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով բաժնի պետ Վահագն Վարազյանը:

Լիագումար միտինգ գեկուցումներով հանդես եկան ԱրՊՀ պատմության ամբիոնի դասախոս, «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Միեր Հարությունյանը («Զինադադարի հաստատման ռազմաքաղաքական վերլուծությունը»), ԱրՊՀ ուսանողուհի Սիրանուշ Օհանյանը («ԼՂՀ հիմնախնդրի աշխարհաքաղաքական վերլուծությունը») և ԵՊՀ ուսանողուհի Աստղիկ Ավետիսյանը («Պատերազմի և խաղաղության 20 տարի. 20-ամյա տեղեկատվական պատե-րագան»):

Այնուհետև գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց չորս մասնախմբերում, որոնք ավարտվե-լուց հետո տեղի ունեցավ եզրափա-կիչ միտինգ՝ արդյունքների ամփոփմամբ: Գիտաժողովի մասնակիցները դիտեցին ԼՂՀ ՊԲ պատրաստած «Անկախության պահպանումը» տեսա-ֆիլմը:

ԶԻՆԱԴԱՂԱՐԻ



Միեր ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ, ԱրՊՀ պատմության ֆակուլտետի դասա-խոս, Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն, պատմական գի-տությունների թեկնածու

Հիրավի, զինադադարի թեման այսօր խիստ հրատապ է, որովհետև դեռևս ապրելով մի այնպիսի տարա-ծաշրջանում, որտեղ իրենց աշխարհաքաղաքական շահերն են հետապնդում մի շարք երկրներ, սկա-նատես լինելով աշխարհում տեղի ունեցող զարգացումներին, գործըն-թացներին, բոլորս մտահոգված ենք մեր սպազայով, իսկ այն, ինչպես գիտենք, կարող է երաշխավորված լինել միայն, երբ կարողանանք պե-տականության կենսունակությունն ապահովել, երբ կարողանանք պահ-պանել, երկարաձգել խաղաղությունը: Իսկ այդ խնդիրը լուծելու համար միանշանակ անհրաժեշտ է վերափ-մաստավորել զինադադարի հետ կապված բոլոր իրադարձություննե-րը, հասկանալ, թե ինչպես հաջող-վեց երկար պայքարից հետո ի վերջո հակառակորդին հարկադրել, համա-ծայն լինել զինադադարի պայման-ներին և կարողանալ այդպիսով ուր-վագծել մեր հետագա անելիքները: Խոսելով զինադադարի հաստատ-ման ռազմաքաղաքական նախադր-յալների մասին, կարող ենք առանձ-նացնել ներքին նախադրյալները, մասնավորապես ռազմաճակատում ստեղծված իրավիճակը: Թռուցիկ հայաքց նետելով ոչ հեռու անցյա-լին՝ կարող ենք արձանագրել, որ արդեն 1993թ. ձմեռային պատերազ-մական շրջանում Հեյդար Ալիևի կող-մից ձեռնարկված հերթական լայնա-ծավալ ազդեցիկ արդյունքում Ար-ցախի ինքնապաշտպանության ու-ժերը ողջ հայության աջակցությամբ կարողացան դիմագրավել Օժախից մինչև Արաքս ձեռնարկված այս ան-նախադեպ հարձակումը և հակառա-կորդին ստիպել դադարեցնել առաջ-խաղացումը: Դեռ ավելին, արդեն 1994թ. գարնանային պատերազմա-կան փուլում Արցախի ինքնապաշտ-պանության ուժերը ձեռնարկեցին մի շարք վճռական հակահարձակում-ներ Արցախի, Քարվազի ուղղու-թյուններում և Հարավում, ինչը հա-կառակորդին ստիպեց մտածել իր բարոյաբլվող զորամասերի, բանա-կի մարտունակության վերականգն-ման խնդրի շուրջ: Հատկապես ուժեղ մարտեր ծավալվեցին Սիրաշիրի ուղղությամբ, որը հանդիսանում էր Արքեբեջանի Հանրապետության վեր-ջին ռազմական հենակետը ԼՂՀ սահմանների հարևանությամբ:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԶԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է...



Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ, ԵՊՀ հայ գրականության ամբի-ոնի վարիչ, բանասիրական գիտու-թյունների դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի Երևան մայրաքաղա-քը և Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը հիմնված են ադրբեջանական հողե-րի վրա, և Տավուշի ամբողջ տարա-ծաշրջանը համարում են Հյուսիսա-յին Ադրբեջան: Գրականագետը վկայակոչում է վերջերս ԵՊՀ-ում իրենց կազմակերպած գիտական նստաշրջանը՝ նվիրված Նիզամի Գյանջևի կոչված հեղինակին: Ո՞վ է Նիզամի Գյանջևին: Հիմա հնարա-վոր է՝ բոլորս միասին մտածենք, թե 12-րդ դարի ադրբեջանցի բանաս-տեղծ է: Այդպես իրենք տարածում են: Բայց բուն իրողությունն այն է, որ Նիզամին Պարսկաստանի խոր-քում է ծնվել, Դուում: Բացի այդ, նույն այդ Նիզամին գրել է (Ս. Մու-րադյանին պարսկերենից թարգմա-նել է Գուրգեն Սելիքյանը): «Տեր Աստված, երբ արդեն շունն ստեղ-ծել էիր, մի՞թե դա քիչ էր, որ դրանից հետո թուրք ստեղծեցիր»: Եվ այդ Նիզամուն ադրբեջանցիները հա-մարում են իրենց գրականության նախահայրը: Ու քանի որ Նիզամու պարսիկ լինելը, պարսկական գրա-կանության հզոր երևույթ լինելն ակնհայտ է, Պարսկաստանի դե-սպանության հետ պայմանավորվե-լով, ԵՊՀ-ում կազմակերպել են գի-տական նստաշրջան՝ նվիրված Նի-զամի Գյանջևուն, որովհետև ազե-րիները ՅՈՒՆԵՍԿՕ-ով տոնում են նրա ծննդյան 850-ամյակը:

Այդ գիտաժողովում Ս. Մուրադ-յանը հանդես է եկել գեկուցումով «Խոսքով և Շիրին» վիպերգի մա-սին, որտեղ 12-րդ դարի պարսիկ բանաստեղծ Նիզամին այս տարա-ծաշրջանը հրաշալիորեն նկարագ-րել է և ոչ մի տեղ, ոչ մի անգամ չի հիշում, թե այստեղ եղել է նաև Ադր-բեջանը: Չկա նման բան: Նա ներ-կայացրեց միայն մի փաստ. պար-սից Խոսրով Փարվիզ թագավորը սիրահարվել էր հայուհի Շիրինին: Գրականագետը Ս. Կաղանկատվա-ցու պատմության ծալքերում հայտնաբերել է, որ այս Շիրինը իս-կապես եղել է այս տարածաշրջանի Առան աշխարհի հայուհի գեղեցկու-հիներից մեկը, եղել է մեծահա-րուստ, որի հարստությունը անսկա-րած էր, և որի գործերը Պարսկից հասնում էին մինչև Սպահան: Խոս-րով Փարվիզն իր մտերիմ ընկերո-ջը՝ նկարիչ Շապուրին, ուղարկում է Հայաստան (Նիզամին չի ասում՝

նեմիական հրատարակությունը: Դրա մեջ հանված են Հայաստանին և հայությանը նվիրված բանաս-տեղծությունները: Գրականագետը դրանցից միայն մեկը հիշեցրեց, որը պատկերացում է տալիս, թե ին-չի մասին է խոսքը: Խագանին ասում է.

Թե Հայաստանում իմ ճանաչելին, Գնահատելին իմ Հայաստանում, Այդպիսի մի դառ չէր տա երկի մոլորակ Տեր Աստվածն իրեն դրախտում: Սա երգել է պարսիկ բանաս-տեղծ Խագանին, որ այժմ, 800 տա-րի հետո կոչվում է Խագանի Շիր-վանի: Ոչ միայն ստեղծագործու-թյունն են յուրացրել, այլև անունն են փոխել:

Արդեն 20 տարի է՝ ականատես ենք այս խախտու զինադադարին, որը, ցավոք, չի վերածվում կատար-յալ խաղաղության: Ի վերածվում, որովհետև անընդհատ գործում են ադրբեջանցի կամ Արքեբեջանի կող-մից վարձված դիպուկահարները: Իսկ նրանք մարդկային կյանքեր են խլում: Եվ ամեն անգամ, երբ որ հայ-ադրբեջանական բանակցություն-ների հարց է առաջանում, նրանք սաստկացնում են իրենց քայլերը, իրենց նույն գործողությունները: Եվ ամեն անգամ էլ զոհեր են լինում:

Ս. Մուրադյանի եզրակացու-թյունն է. ավագ սերնդի ջանքերով 20 տարի առաջ նրանց արյան և կյանքի գնով կարողացանք վագրի երախտ փոխել Արցախ աշխարհը: Նա ասաց, որ ընդամենը անցած ամառ է եղել Արևմտյան Հայաստա-նում ու տեսել, թե մեծք այնտեղ ին-չք էր ենք կորցրել... Այնպես որ, Ար-ցախի ազատագրումն այդ բոլոր կորուստների դիմաց մի փոքր փոխ-հատուցում է միայն: Այսօրվա սե-րունդներին վստահված է Արցախ աշխարհում և ամբողջ Հայաստա-նում, մեր երկու պետություններում խաղաղություն հաստատելու պատվավոր և պատվաբեր խնդիրը: Եվ մեծք պարտավոր ենք ներդնել ամեն բան՝ մեր ավագների ձեռքե-րումը, մեծ նվաճումը չփոխադրելու համար: Ընդհանրապես, ավելի ան-րապատելու խաղաղությունը, ավելի հաստատական լինելու՝ մեր ժո-ղովրդի միասնական նպատակն իրագործել և ներդնել ամեն ինչ:

Որ պատերազմը շարունակվում է բոլոր ճակատներում՝ մշակույթի, գիտության, և ամենուր ազդերն են առաջ են ընկնում՝ ապավինելով իրենց ստոր քաղաքականությանը, ըստ որի՝ «Ամեն ինչ իմն է, ամեն ինչ իմն համար է», որպես նրանք այս գործելակերպի օրինակ՝ ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մու-րադյանը մատնանշում է մի քանի փաստեր գրականության բնագա-վառից:

Մեր թշնամին գործադրում է բո-լոր անգլիկ եղանակները, բոլոր ստոր միջոցները՝ իրեն գոհի կար-գավիճակում ներկայացնելու և մեզ ազդեստոր համարելու: Մեզ հարևան վրացիները նոր-նոր են գլխի ընկել, թե ինչ է նշանակում թուրք-ադրբե-ջանական քաղաքականություն. Բաքվում լույս տեսած «Ադրբեջանի պատմություն» 8-րդ դասարանի դասագրքում նշված է, որ 12-րդ դա-րում հայ-վրացական միացյալ զո-րական ուժերը հարձակվել են պատմական Ադրբեջանի վրա և բե-նագավթել իր թեթիլիսի մայրաքա-ղաքը: Սա ծիծաղելի է թվում, բայց ցավալի իրողություն է, և մենք պար-տավոր ենք նման թշնամու հետ ոչ թե խոսել իր լեզվով, այսինքն՝ իջ-նել նրա մակարդակին և նույնպիսի ծիծաղելի քայլեր անել, այլ պետք է գիտական հիմնավորումներով հեր-քել այդ կարգի ստերը՝ այս համոզ-մանն է գրականագետը: Նրանց մեծ ղեկավարից սկսած՝ ասում են, թե

ԶԻՆԱԴԱՂԱՐ-20

ՀԱՍՏԱՏՄԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

թյուն կունենար սրընթաց առաջ շարժվել էվլախ, Բարդա, Մինգեչաուր գծով և կտրել Աղբեջանի արևմտյան շրջանները բուն Աղբեջանական Հանրապետության տարածքից: Իսկ դա լուրջ վտանգներ է պարունակում լուրջ իշխանափոխության վտանգ. առանց այն էլ 1993թ. ձմեռային պատերազմափուլում կրած անհաջողություններից Յեդրար Ալիևի երերացող իշխանությունն իսկապես կարող էր փլուզվել: Այդ պայմաններում աղբեջանական կողմը ինչքան էլ փորձեր համառություն դրսևորել, այնուամենայնիվ, ի վերջո ստիպված էր համաձայնվել հրադադարի պայմաններին և նստել բանակցությունների սեղանի շուրջ: Եվ 1994թ. մայիսի 12-ին իրավաբանորեն ձևակերպվեց հրադադարի համաձայնագիրը, որ ամրապնդվեց 1994թ. մայիսի 17-ին, պաշտպանության նախարարների ստորագրած համաձայնագրով, որ առայսօր պահպանվում է, իհարկե, խախտումներով հանդերձ:

Այդ ժամանակաշրջանում փաստորեն կարող էինք պնդել, որ ռազմաճակատում ստեղծվել էր ուժերի հավասարակշռություն, երբ օրըստօրե աճում էին մարդկային կորուստների, ինչու էլ, նյութական կորուստների չափերը, ու թեև աղբեջանական կողմն ուներ պաշարներ՝ և՛ մարդկային, և՛ նյութական, բայց գրկվել էր մարտական ոգուց, նրա բանակը, նրա զինված ուժերը, ամբողջությամբ մեջ վերցրած, ի վիճակի էին լուրջ մարտական գործողություններ վարելու: Իսկ հայկական կողմը, ունենալով բարձր բարոյամարտական ոգի, վճռակաճորեն տրամադրված լինելով շարունակել հակառակորդին հրադադարի պարտադրելու ռազմագործողությունները, ուներ մարդկային և նյութական պաշարների սահմանափակում, ինչը թույլ չէր տալիս շարունակել այդ տենպերով ռազմական գործողությունները:

Անդրադառնալով արտաքին գործոններ-

ին՝ արձանագրում ենք, որ 1993-ի վերջին և 1994-ի սկզբներին փաստորեն ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, երբ արցախյան հիմնախնդրի կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խումբը փաստորեն սպառել էր իր հնարավորությունները որևիցե կերպ ազդելու հակամարտության ընթացքի վրա: Բավական է հիշել, որ գերտերությունների հակասությունների արդյունքում ծնված ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի չորս բանաձևերն այդպես էլ չիրագործվեցին, արհամարիվեցին, նախ և առաջ, աղբեջանական կողմի ոչ կառուցողական դիրքորոշման պատճառով: Ինչու ենք այդպես ասում, որովհետև այդ արձանագրություններում առաջին պահանջն էր անհապաղ դադարեցնել մարտական գործողությունները, ինչը ամեն անգամ աղբեջանական կողմը խախտում էր և շարունակում ուժի դիրքերից խոսել՝ հույս ունենալով զենքի ուժով հասնել իր խնդիրներին: Բնականաբար, եթե այդ պահանջը չէր իրականացվում, և երկրորդ պահանջը՝ զորքերի դուրսբերումը օկուպացված տարածքներից, չէն կարծում, թե վերաբերում էր միայն հայկական կողմին: Նաև աղբեջանական կողմը պետք է նշաններ ցույց տար, ասենք, Շահումյանի, Մարտակերտի և Մարտունու օկուպացված տարածքներից իր զորքերը հեռացնելու ուղղությամբ, ինչը դարձյալ տեղի չունեցավ: Յետևաբար, սիսայսպիսի իրավիճակում բավական մեծ ակտիվություն հանդես բերեց Ռուսաստանի Դաշնությունը: Բոլորս հասկանում ենք, որ ՌԴ-ն նաև այսօրվա իրադարձությունների համապատկերին ավելի իրական հնարավորություններ ուներ ազդելու մեր տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների վրա: Դեռ 1991-1994 թթ. իրադարձությունների վերլուծությունը մեզ հանգեցնում է այն մտքին, որ բավական էր կողմերից մեկը փորձեր չեղվել ռուսական վերջնագրերից կամ պահանջներից, Ռուսաստանը անմիջ-

ապես հակառակորդ կողմին զինատեսակներով ու այլ միջոցներով օգնում էր, որպեսզի նա առավելություն ստանա ռազմաճակատում: Այդպիսի մի քանի դեպք կրկնվել է, ինչը նաև փաստորեն վճռական գործոն հանդիսացավ 1994թ. խաղաղարար գործընթացներում, որովհետև ինչքան էլ Յեդրար Ալիևի թիմը համառներ և խուսափեր հրադադարը ստորագրելուց, քաջ հասկանում էր, որ բավական էր ռուսական կողմը խախտեր այդ հավասարակշռությունը, անմիջապես հայկական զինված ուժերը կարող էին ոչ միայն Միրաչիի հարցը լուծել, այլև հասնել Գանձակ: Ահա այս սպառնալիքն էլ էր ընդդեմ առումով նպաստեց, որ կոտրվեր աղբեջանական կողմի համառությունը:

Գիտենք, որ դեռևս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից անմիջապես հետո ձեռնարկվել էր խաղաղարար գործընթաց Նազարբաևի և Ելցինի կողմից, որը 1991թ. սեպտեմբերի 23-ին ամրագրվել է ժելզնուղուկայան կոմյունիկեի ձևով և հետագա բոլոր խաղաղարար գործընթացներում այլ դեպքերում են որոշակի հաջողություններ արձանագրվել, և իսկապես Ռուսաստանի Դաշնությունը հանդես է բերել նախաձեռնություն և կարողացել է որոշակիորեն համոզել աղբեջանական կողմին իր հավակնություններից մի քիչ հետ կանգնելու: Ես խնդրում եմ ճիշտ հասկանալ. ոչ թե Ռուսաստանի դերը կարևորելով են փորձում զբաղվել, այլ ուղղակի եկեք արձանագրեք իրականությունը և փաստենք, որ 1994թ. փետրվարի 18-ին հասկանարար կողմերի պաշտպանության նախարարների կողմից ստորագրված արձանագրությունը, թե՛ բիշբեյան արձանագրությունը՝ խորհրդարանականների մակարդակով, թե՛ ապրիլի 15-ի ԱՊՀ պետությունների դեկլարանտի խորհրդի կողմից ընդունված հայտարարությունը և թե՛ մայիսի 12-ին հաստատված զինադադարը, բոլորն էլ եղել են

Ռուսաստանի անմիջական նախաձեռնությամբ: Եվ նույնիսկ տարօրինակ չթվա, այդ ժամանակաշրջանում ի հայտ էր եկել մի յուրօրինակ մրցակցություն ռուսական կողմի և Մինսկի ԵԱՀԿ խմբի մյուս երկրների միջև, և այս հաջող քայլերն ինչ-որ տեղ, ինչպես այդ ժամանակ Ռուսաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովն է բազմիցս անդրադարձել, արևմտյան երկրները մի տեսակ նախանձով էին նայում այս գործընթացներին:

Հաճախ այն կարծիքն է հնչում, որ եթե զինադադարը չհաստատվեր, ապա հայկական կողմը կարող էր լուծել իր առաջ դրված ռազմական խնդիրները: Սակայն վերլուծելով 1994թ. զարմանալի պատերազմյան շրջանի իրադարձությունները, այդ կորուստների վիճակագրությունը, ռազմական գործողությունների դինամիկան, գալիս ենք այն համոզման, որ դա այնքան էլ իրականությանը չի համապատասխանում, որովհետև ինչպես աշխարհաքաղաքական իրադրությունը, որ ստեղծվել էր այդ ժամանակ, այնպես էլ ռազմաճակատում ստեղծված իրավիճակը նման հնարավորություն չէր տալիս, ուստի զինադադարի հաստատումը եղավ ճիշտ ժամանակին և հնարավորություն տվեց դադարեցնել կրակը և հետագա պետական շինարարությամբ զբաղվել:

Այսօր բոլորս լրատվամիջոցներից տեղեկացված ենք, որ սահմանային գոտում հրադադարն անընդհատ խախտվում է, բայց փոխանցելով մեր ռազմական գերատեսչությունների դեկլարանտի հայտարարությունները, մեկ անգամ ևս ձեզ հետ միասին համոզված ասենք, որ հայկական զինված ուժերն այսուհետ ևս պատրաստ են արժանի կապահարված հասցնել հակառակորդի բոլոր ոտնձգություններին և այսուհետ ևս պարտադրել նրան՝ հարգելու հրադադարը:

Էկոտուր-2014

ԵՎՍ ՄԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ

Ապրիլի 25-ին երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում մեկնարկվեց ՀՀ ԿԳՆ պատվերով իրականացվող «Հանրակրթական Էկոտուր-2014» էկոլոգիական նախագծերի միջազգային 4-րդ ստուգատեսը, որին նախորդ տարիների համեմատությամբ ներկայացվել է ավելի շատ՝ 121 հայտ: Այս անգամ մասնակցում էր նաև Ստեփանակերտի թիմը՝ տարբեր դպրոցների աշակերտներից կազմված. հ. 1 դպրոցից՝ Անգելինա Թովմասյան, հ. 5 դպրոցից՝ Ալյոնա Համբարձումյան, հ. 10 դպրոցից՝ Անդրանիկ Վերդյան, հ. 11 դպրոցից՝ Աննա Արզումանյան և Անի Հարությունյան, ղեկավար՝ Անահիտ Մեսրոպյան:

Այս երեխաները մարտ ամսին հյուրընկալվելով «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում՝ բուռն ցանկություն ունեին մասնակցելու նաև Էկոտուրին, որի համար բավականին տրամաբան աշխատանք էին կատարել ըստ պահանջվող ծրագրի: Ընտրել էին «Անաղբ համայնք» թեման և պատրաստել ֆիլմ, պահպանված են ծրագրի բոլոր պահանջներն ու կանոնները: Այն նախապես հավանության է արժանացել, որի համար մենք հնարավորություն ունեցանք մասնակցել «Էկոտուր-2014»-ին:

Մրցույթի նախօրեին՝ ապրիլի 24-ին, սեբաստացիների և բոլոր խմբերի հետ մասնակցեցինք ծառատունկ-ծաղկատունկին: Եվ այսպես, ծառերի, տնկիների, սածիլների, ցնցուղների, բահերի, փոցխերի իսկական տեղատարափ էր՝ էկոլոգիական հեղաշրջում կրթահամալիրում: Հագեցած աշխատանքային օրն ավարտեցինք Ծիծեռնակաբերդում՝ հարգանքի տուրք

մատուցելով 1915թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Անբողջ ճանապարհին մենք հետադարձ հայացք էին ձգում դեպի անցյալը, խոսում ներկա ձեռքբերումների ու առաջընթացի մասին և նոր ծրագրեր կազմում՝ լուսավոր ու խաղաղ ապագա կերտելու ձգտումով:

Հաջորդ օրը մասնակից խմբերը հերթականությամբ ներկայացրին իրենց աշխատանքները: Ժամանակն անցավ շատ թեթև և ուրախ, դիտեցինք ֆիլմերը: Խստապահանջ էին հանձնախմբի անդամները, սակայն՝ անաղբ ու անկողմնակալ: Ցուցադրությունից հետո խմբի ավագը պարտավոր էր պատասխանել հանձնախմբի հարցերին: Անվանակարգերը տարբեր էին, շատ էին շաբաթօրյակների, գետերի հիմնախնդիրների մասին նախագծերը: Պարզվեց, որ գետերն էլ աջակցելու կարիք ունեն: Մեր թիմը ներկայացրել էր Կարկառ գետի հիմնախնդիրները, Լոռու համայնքը՝ Դեբեդի, Գավառի համայնքը՝ Գավառագետի, վրացիները՝ Քուռ գետի... Բազում աշխատանքների ծանոթանալով և ուսումնասիրելով՝ ավելի ես արժևորում էկոլոգիայի անհրաժեշտությունը: Մենք բոլորս համախմբվել էինք մեկ գաղափարի շուրջ՝ պահպանել մեր մայր բնությունը, դրանով իսկ պաշտպանել մեր հայրենիքն ու հաջորդ սերունդներին փոխանցել ավելի մաքուր ու բարգավաճ երկիր: Երևի թե այդ ջերմ մթնոլորտում ոչ մի թիմ չէր

մտածում հաղթանակի մասին, ուրախանում էինք իրար հաջողություններով, հավանության արժանացած ֆիլմերը ձայնագրում էինք մեզ համար՝ որպես ուսումնական նյութ: Շատերիս ուշադրությունն է գրավել Բազմադրուր համայնքի «Բունեբանգ» թիմի ֆիլմը, որի թեման էր «Աղբի վերանշակումը և թափոնների երկրորդային օգտագործումը»: Բավական հետաքրքիր և ուսանելի էր՝ ապահովված նաև մշակութային մասով: Դատարկ անձեռնցիկների տուփերից տուն էին պատրաստել, տանիքը՝

մաղբյուրցիները սիրով բացատրեցին մյուս ընկերներին: Ազատ ժամերին զբաղվում էինք այդ աշխատանքով՝ վարժվելու նպատակով: Բավական հետաքրքիր էր նաև



աղմուկի մասին վրացիների աշխատանքը: Պարզվեց, որ աղմուկն ազդում է մարդու առողջության վրա, խանգարում մտածելու և կողմնորոշվելու: Հուզիչ էր Սպիտակի թիմի՝ երկրաշարժի վերաբերյալ ֆիլմը: Այն ուշադրություն էր պահանջում: Լավագույն աշխատանքները խրախուսվեցին ժյուրիի կողմից: Վճռորոշ էր ապրիլի 26-ը: Օրը սկսվեց շատ լավ տրամադրությամբ: Նախաճաշից հետո ուղևորվեցինք Գեղարվեստի դպրոց, մասնակցեցինք առավոտյան պարապմունքին, այնուհետև՝ Արհեստների դպրոց և ծանոթացանք նրանց առօրյային: Դրանից հետո գնացինք կրթահամալիրի Մայր դպրոց, որտեղ կլոր սեղանի շուրջ եղան քննարկումներ, արվեցին առաջարկություններ հաջորդ՝ 2015թ. Էկոտուրը կազմակերպելու համար: Ժամը 15:00-ին մարմարյա

արահում սկսվեց «Էկոտուր-2014»-ի արդյունքների ամփոփումը և մրցանակների հանձնումը: Մեր ուրախությանը չափ ու սահման չկար, երբ մեր թիմն էլ խրախուսական մրցանակ ստացավ. այն է՝ միջազգային 10-օրյա ճամբար Կրասնամուս: Ավելի հուզիչն այն էր, երբ որպես մրցանակակիր թիմ, Անդրանիկին հրավիրեցին երգելու, իսկ Անիին՝ արտասանելու: Պահը չկորցրինք, վրացիներն հետ չփվելով՝ վրացական երգ սովորեց Անդրանիկը՝ Անի՛ն՝ Սայաթ-Նովայի թարգմանությունից վրացերեն՝ միջազգային ճամբարի համար:

Մրցանակաբաշխությունից հետո Գավառի թիմի հետ որոշեցինք գնալ Հ. Պարոնյանի անվան պետական թատրոն, որտեղ նայեցինք «Մեր տան տերերը» կատակերգությունը: Երկու թիմերիս կցված էին ընկեր Գայանեն և ընկեր Սոֆյան: Մենք հիացած էինք այսպիսի ընկերներով: Չորս օր մեզ հետ էին՝ առավոտից իրիկուն, որոնց ուղեկցությամբ վայելում էինք երկկայան երևանը: Մենք անչափ ուրախ էինք և տպավորված օրվանից: Անմոռանալի էր հրաժեշտի երեկոն:

Թիմի անդամների անունից շնորհակալություն ենք հայտնում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն տիար Ա. Բլեյանին՝ ջերմ ընդունելության համար և բոլոր այն մարդկանց, ովքեր այս ժամանակաընթացքում եղան մեր կողքին, պարզեցին անմոռանալի օրեր, հաճելի պահեր: Մեր շնորհակալությունն ենք հայտնում քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Բ. Մարգարյանին և ԿԳ նախարարությանը՝ աջակցելու հարցում:

ՄԵԹՈԴՈՒՆԶ

ԲԱՑ ԴԱՍԵՐ

ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼՈՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻՆ

Եթե կորցնենք մեր ռազմական ուժը, կկորցնենք մեր պետականությունը, իսկ եթե կորցնենք մեր մտավոր և հոգևոր ուժը, կկորցնենք մեր ժողովրդին...

Հայտնի է, որ յուրաքանչյուր սերունդ իրեն հաջորդող սերնդին է ավանդում այն ամենը, ինչ ինքն է ժառանգել, պահպանել, կատարելագործել կամ նորը ստեղծել: Իսկ ժառանգածը պահպանելու, կատարելագործելու կամ էլ նորը ստեղծելու համար պետք է համապատասխան աշխատանք՝ ամենօրյա, հետևողական, ինքնամղվեր:

15 տարի առաջ, երբ Շուշիի շրջանում վերականգնեցինք փնջային մեթոդիավորումը, ոմանք նվազ սպասումներ ունեին, սակայն փորձը ցույց տվեց, որ դա արդյունավետ, օգտակար, հետաքրքիր և հաճելի աշխատանք է նաև մեր օրերում: Այս ամենի վառ ապացույցը կարող են հանդիսանալ նաև այս տարվա կատարած աշխատանքները:

Հանգամանքների բերումով ես փնջային մեթոդիավորման մեջ ընդգրկված երեք դպրոցների ուսուցչական կազմին համարյա գիտեմ, իսկ չորրորդի (Քարին տակի) հետ ծանոթ եմ 1968-ից՝ նույն օղակով:

Ինչպես ցույց են տալիս կազմակերպված բաց դասերն ու զեկուցումները, մեր ուսուցիչները պրպտուն միտք ունեն, օգտագործում են լրացուցիչ գրականություն, մշակում նոր նյութեր, որոնք դասը մատչելի և հետաքրքիր են դարձնում: Նշված տարիների փորձը ցույց է տալիս, որ մեր ուսուցիչներն ամեն կերպ ձգտում են իրենց մեջ համադրել սերը գործի և աշակերտի նկատմամբ և ջանում իրենց կրթությունը լրացնել գիտելիքի թեկուզ փոքրիկ, բայց իրենց համար նոր մի մասնիկով...

Ուսանելի են նաև բավականին նորություններ պարունակող՝ նրանց գիտականորեն հագեցած և մշակված մեթոդական և մասնագիտական զեկուցումները:

Շրջանում հերթական անգամ հրավիրված՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական, Մուրացանի անվան ավագ, Դ. Ղազարյանի անվան միջնակարգ մասնագիտացված երաժշտական, Քարին տակի Հ. Ղարախանյանի անվան միջնակարգ դպրոցների փնջային մեթոդիավորման նիստը նպատակ ուներ պահպանելով կրթական համակարգի լավագույն ավանդույթները՝ բարելավել ուսումնական գործը նշված դպրոցներում:

Մեր խնդիրն է ուշադրության արժանի մեթոդներն ուսումնասիրել, վերլուծել, ընդհանրացնել և տարածել նախ շրջանի, ապա՝ հանրապետության դպրոցներում: Փնջային մեթոդիավորումը կարևոր է նաև այն առումով, որ չորս դպրոցների ուսուցիչները հավաքվում և միմյանց են հաղորդում իրենց փորձը, դասավանդման մեթոդներն ու եղանակները: Նման հանդիպումներով ստեղծվում է այն միջավայրը, որտեղ ուսուցիչներն իրար են փոխանցում իրենց անծանալ մշակումները, որով էլ կարգաճանաչման անկախարժեքական մեթոդիկան:

Կրթական համակարգը ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտ է, ուստի այն պետք է բարեփոխել, անընդհատ կատարելագործել և համապատասխանեցնել ժամանակի ոգուն: Գտնում են, որ ամեն մի ուսուցչի ստեղծագործական եռանդը, նրա ձեռքբերումները պետք է դառնան համազգային ներուժ:

Հուսով եմ, որ մեր շահագրգիռ և լուրջ վերաբերմունքով կարողարացնենք բոլոր ակնկալիքները և այդ աշխատանքները կղենք որակապես նոր մակարդակի:

Նազիկ ՆԱԼԵԱՆՅԱՆ
Փնջային մեթոդիավորման
Նախագահ



Տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցումը մեր կյանքի բոլոր բնագավառներ, այդ թվում՝ կրթական համակարգ, անշուշտ, հեշտացրել է ցանկացած հարցի շուրջ նոր գիտելիքների ձեռքբերումը, հարստացումը, նորագույն մեթոդների տիրապետումը: Սակայն դրանով հանդերձ, հետին պլան չի մղվել մարդկանց, տվյալ պարագայում՝ ուսուցիչների կենդանի շփման նշանակությունը: Նախկինում հարգի էին ուսուցիչների փնջային մեթոդիավորման նիստերը, որոնց ժամանակ հարևան մի քանի դպրոցների ուսուցիչները պարբերաբար հավաքվում, բաց դասեր էին կազմակերպում, դասավանդման իրենց մեթոդները, յուրաքանչյուրն իր առարկայի գծով հիմնախնդիրները ներկայացնում, քննարկումներ կատարում, առաջարկություններ առնում, զուտ մարդկային առումով միմյանց հետ շփվում, ուրախանում հաջողություններով, իրար հետ մի կտոր հաց կիսում: Բարեբախտաբար, լավագույն այս ավանդույթը պահպանվել է որոշ շրջաններում, և մասնավորապես՝ Շուշիի շրջանում, որի փնջային մեթոդիավորման նիստին մասնակցեցինք օրերս:

Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական, Մուրացանի անվան ավագ, Դ. Ղազարյանի անվան միջնակարգ մասնագիտացված երաժշտական և Քարին տակի Հ. Ղարախանյանի անվան միջնակարգ դպրոցներն ընդգրկված են մի մեթոդիկանում, որը 15 տարի անփոփոխ ղեկավարում է Խ. Աբովյանի անվան դպրոցի տնօրեն, հանրապետության վաստակավոր մանկավարժ Նազիկ Նալբանդյանը: Փնջի գունարանը հերթական վայրն էլ հենց այդ դպրոցն էր: Ներկայացել էին ԼԳՀ կրթության և գիտության փոխնախարար Միքայել Համբարձումյանը, Կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, Գեհախանյան և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի Քարամյանը, «Լուսարար»-ը:

Ավելորդ է խոսել այն տպավորության մասին, որը թողեց հյուրընկալ դպրոցը. նախ՝ արտաքին ազդեցությամբ: Արդի չափանիշներով հիմնականում և կահավորված կրթության առաջին հերթին հպարտության մեծ զգացում է առաջացնում, որ ավերակված մեր Շուշիում ամենալավ բանը արվել է երեխաների համար: Նման դպրոցում աշխատելն իսկապես երջանկություն է, ղեկավարելը՝ մեծ պարտավորություն, ինչին էլ ակնառես եղանք: Բնական է, որ ցանկացած օջախ երբ սպասված հյուր է ընդունում, այդ օրը տոն է դառնում:

Մեթոդիկայի նիստի մասնակիցներին ողջունեց հյուրընկալող դպրոցի տնօրեն Ն. Նալբանդյանը՝ մաղթելով հետաքրքիր և արդյունավետ աշխատանք: Այն սկզբում մասնախմբերում էր: Տասն առարկաների գծով կազմակերպվեցին ընդօրինակման դասեր: Նշենք, որ հենց սկզբից էլ զգացվում էր աշխատանքների կազմակերպվածության բարձր մակարդակը: Մեթոդիկայի օրակարգը, որն ուներ ամեն մասնակից իր ձեռքի տակ, տարբեր դասարաններում բաց դասերի թեմաների վերնագրերով, դրանց անցկացնող և հարակից թեմաների շուրջ զեկուցող ուսուցիչների ազգանուններով, դասարանների դռներին համապատասխան ցուցանակները այդ էին հուշում ու նաև այն, որ գիտաժողովի նմանությամբ անցկացվող դասերի շարանը գիտական մակարդակ էր ենթադրում: Առանց ժամանակ կորցնելու և իրարանցման յուրաքանչյուր մասնագետ հայտնվեց հսկա դպրոցի իրեն հարկավոր դասարանում: Յուրաքանչյուր դասարան կահավորված էր տվյալ դասին համահունչ պարագաներով: Ընդհանրականը միայն

սա չէր: Բոլոր դասարաններում աշակերտները՝ կոկիկ հագնված ավանդական սև-սպիտակի համադրությամբ, պայծառ հայացքներով, իսկ դասալսողներին հատկացված նստարաններին՝ գարնանային ծաղիկների՝ մանուշակի, կուժկուտրուկի, մարգիզի փնջեր: Ափսոսալ միայն կարելի էր, որ դասերն ընթանում էին համաժամանակյա, և հնարավոր չէր բոլորին ներկա գտնվել: Մեծ ցանկություն ունեի ամբողջ ժամանակ լինել գրականության դասին: Հետաքրքրողը ոչ միայն «Աղասի Այվազյանի «Վասն շենքի և շինության» թեման էր և Մուրացանի անվան դպրոցի ուսուցչուհի Օլյա Իշխանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի ուսուցումը» հարակից զեկուցումը, այլև դասավանդող ուսուցչուհին՝ Վարդիթեր Հակոբյանը, ով իր հետաքրքիր հոդվածներով հաճախակի է հանդես գալիս «Լուսարարի» էջերում: Ափսոսանքով կիսատ թողեցի դասը, որի ընթացքում բավականաչափ տեղեկություններ տրվեցին թեմային առնչվող ճարտարապետական կորոզների ու հեղինակների մասին, այդ թվում՝ արցախյան, և հնչեց ասումը ու երգ: Մասնագիտական պահանջից ելնելով՝ պետք է ներկա գտնվեի նաև մյուս դասերին: Եվ այդ մի քանի րոպեներն էլ ասում էին, որ ձևի և բովանդակության առումով հետաքրքիր դասեր են ընթանում բոլոր դասարաններում: Իսկ մասնակցելով քննարկումներին, համոզվեցինք, որ վերլուծություններն ընթանում են գիտական տարրերի զուգակցմամբ, վիճաբանական մթնոլորտում:

Հենց միայն բաց դասերի թեմաները և հարակից զեկուցումները հուշում էին, թե ինչ հետաքրքրություն պետք է ներկայացնեին դրանք: Թվարկեցք միայն: Տարրական դասարանների մեթոդիկավորումը մայրենիից դաս լսեց 2-րդ «գ» դասարանում՝ ուսուցչուհի Սուսաննա Բեգլարյանի մոտ: Հին դասի թեման էր «Կռունկը»: Մեզ հաջողվեց լինել նոր դասին, որի թեման էր «Կռունկ Զուկովսկու «Բժիշկ Այբոլիտն ու նրա զագանները», որտեղ աշակերտներից մեկը կերպավորել էր Բժիշկ Այբոլիտին, իսկ դասարանի մի անկյունում՝ «կանաչ բացատում» զագանիկներն էին: Այստեղ զեկուցողը («Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցումը տարրական դասարաններում») Քարին տակի դպրոցի դասավար Ամալյա Ավանեսյանն էր:

Մի շարք դասեր լսվեցին բնագիտական առարկաներից. 9-րդ դասարանում քիմիայից՝ էլմիրա Թևոնյանի մոտ (հին դասի թեման՝ «Ալկալիական մետաղներ»: Նոր դասը՝ «Բերիլիում, մագնեզիում, հողալակալիական մետաղներ: Ջուր»): Հարակից զեկուցումով հանդես եկավ Մուրացանի անվան դպրոցի ուսուցչուհի Նունե Հակոբյանը:

Ֆիզիկայի դասը 7-րդ «բ» դասարանում էր՝ ուսուցչուհի Լիլյա Պողոսյանի մոտ: Թեման հանրամատչելի էր և հետաքրքիր: Հին դասը՝ «Հեղուկի և գազի ազդեցությունն իրենց մեջ ընկղմված մարմնի վրա», նոր դասը՝ «Արքիմեդի օրենքը», ուղեկցվեցին փորձի կատարումով: Իսկ Մուրացանի անվան դպրոցի ուսուցչուհի Արգենտինա Պողոսյանը զեկուցում կարդաց «Միջառարկայական կապերի ապահովումը ֆիզիկայի դասերին» թեմայով: Ներկա էր ԿԳՏ տեսուչ Ս. Արզումանյանը:

Աշխարհագրության դասը 8-րդ դասարանում էր: Ուսուցչուհի Լուսինե Պետրոսյանը աշակերտների հետ ամփոփեց հին դասը՝ «Ավստրալիա և Օվկիանիա», ապա ներկայացրեց նոր դասը՝ «Ավստրալիական միություն»:

ՄԵԹՈԴՓՈՒՆԶ

ՇՈՒՇԻ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մաթեմատիկայի ուսուցչուհի Մարինե Խաչատրյանը 5-րդ «բ» դասարանում պարզաբանեց «Թվաբանական օրենքները կոտորակների բազմապատկման համար» թեման և նոր դասը՝ «Կոտորակների բաժանումը»:

Ինֆորմատիկայի դասը 6-րդ «ա» դասարանում էր: Համակարգչային ընդարձակ դասարանը տրամադրող էր: Ուսուցչուհի Արուս Աթաբեկյանը «Ֆայլային գործողություններ» և «էջի ձևաչափի սահմաններում» հին և նոր դասի թեմաների շրջանակում ձգտում էր հնարավորին չափով շատ տեղեկատվություն հաղորդել: Իսկ Մուրացանի դպրոցից նրա գործընկեր Դավիթ Դուլյանը «Գեոգրա» ծրագրի դասավանդման իր փորձը ներկայացրեց: Դասին ներկա էր փոխնախարար Մ. Համբարձումյանը:

«Տարվա եղանակներ»՝ սա էլ անգլերենի բաց դասի թեման էր 3-րդ «ա» դասարանում, որը ներկայացրեց Նատաշա Պետրոսյանը: Իսկ «Շաբաթվա օրերը» նոր դասն էր: Երկու մասերն էլ անցան երեխաների ակտիվ մասնակցությամբ: Մուրացանի անվան դպրոցից Սահրա Հայրապետյանը հանդես եկավ «Նորարարական տեխնոլոգիաները՝ անգլերենի դասավանդման գործիք» զեկուցումով:

Ռուսաց լեզվից բաց դաս ցուցադրվեց 5-րդ «ա» դասարանում՝ Լիանա Բեգլարյանի կողմից: «Правосписание сурффиксов прилагательных», հին դասն էր, նորը՝ «Журавлик»: Չեկուցող՝ Ռ. Ղազարյանի անվան դպրոցից Անահիտ Ավշարյան:

Պատմության դասը 7-րդ «ա» դասարանում՝ երիտասարդ ուսուցչուհի Շերիբնազ Գաբուլյանի կողմից «Կիլիկյան Հայաստանի ընդարձակումը և ամրապնդումը» և նոր դասը՝ «Հայոց թագավորության ամրապնդումը», հետաքրքիր էին ոչ միայն այն առումով, որ հայոց պատմության փառավոր էջերից են, այլև՝ որ Քարին տակի ուսուցիչ Արամայիս Հովհաննիսյանի «Պատմության դասի մատչելիության իմ փորձից» զեկուցումը և քննարկումներն ընթանում էին հին և արդի ժամանակների համադրությամբ, «ինչո՞ւ», «ինչպե՞ս» հարցադրումներով:

Բաց դասերի և քննարկումների շարունակությունը եղավ լիագումար նիստը դպրոցի դահլիճում: Այն բացեց մեթոդիչի նախագահ Ն. Նալբանդյանը: Նրա առաջարկությունն էր մի կողմ դնել պատճառաբանությունները՝ դասագրքերի անկատարության, ժամաքանակների ծավալի մասին, քանզի եղածը դա է և մտածել, թե ինչ անել, որ աշխատանքը ցանկալի մակարդակ ապահովի: «Մենք հերթափոխ ենք պատրաստում մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր գեոմոֆոնը շոշափելիորեն սասանվել է, և այժմ մենք ավելի ենք պատասխանատու ապագայի առաջ: Մեզանից յուրաքանչյուրն իր առաքելությունը պետք է պատվով կատարի», - ասաց նա:

«Անհատական մոտեցումը՝ որպես երեխաների դաստիարակության արդյունավետ միջոց» զեկուցումով հանդես եկավ Խ. Աբովյանի անվան դպրոցի ու-

սուցչուհի Գոհար Համբարձումյանը: Հանձնաժողովի նախագահները հանգամանալից տեղեկատվություն տվեցին բաց դասերի մասին: Դասերին ներկա չէղածներն անգամ պատկերացում կազ-



մեցին, թե ինչպես են ընթացել դրանք, ինչ մակարդակով: Նախարարության ներկայացուցիչներն իրենք ներկայացրին լսած դասերը: Ընդհանուր առմամբ, տպավորությունը դրական էր, նրանք ողջունեցին նման մակարդակով փնջային մեթոդիա-



վորման նիստ անցկացնելը՝ անելով մի քանի նկատառումներ: Փոխնախարար Մ. Համբարձումյանը՝ ուսուցիչների կողմից որպես բարձր գնահատական հաճախ հնչող «հագեցած դաս» արտահայտու-



թյանը այնքան էլ համամիտ չէ: Ուսուցիչները, կամենալով շատ բան հաղորդել երեխաներին, ինչքան ինֆորմացիա կա, փորձում են մի դասի ընթացքում տալ նրանց, ինչը ճիշտ չէ: «Եթե ջուրը վարար եք բաց թողնում, չի մնում ամանի մեջ: Չափաբաժինը պետք է կարգավորվի: Ին- «Ինֆորմացվածությունը» բառ է միայն, հանենք, թողնենք զուտ գիտական մասը,

և նրա վրա հիմնվենք ու պրակտիկ մասն անցկացնենք», - խորհուրդ տվեց նա՝ ասելով, որ իր լսած դասը հենց այդպիսին էր, ուսուցչուհին հենվում էր գիտական մասի վրա, և փորձ էր արվում լրիվ օգտագործել համա-

կարգչի հնարավորությունները: Նրա մյուս խորհուրդն էր՝ չֆետիշացնել համակարգիչը, այն ընդամենը գործիք է, երեխաները պետք է լավ իմանան դա:

ԿՊՏ տեսուչ Ս. Արզումանյանն իր գոհունակությունը հայտնեց Շուշիի մեթոդիչի աշխատանքները գիտական մակարդակով անցկացնելու առթիվ, ընդգծեց, որ այնուամենայնիվ, դպրոցի աշխատանքը գնահատվում է նրա վերջնական արդյունքով: Ուսուցչի, տնօրենի աշխատանքի հանրագումարային արդյունքը երեխաների ստացած խոր և կայուն գիտելիքներն են և պետք է համապատասխանեն կրթական չափորոշիչների նվազագույնին: Այստեղ մեծ անելիքներ ունեն մակարդակային խորհուրդները, որոնք, ըստ նրա, շատ դեպքերում նպատակին չեն ծառայում:

ԳԹԿ տնօրեն Յու. Բարամյանին դուր էր եկել, որ քննարկումների ժամանակ ուշադրություն է դարձվել թերությունների վերհամարմանը, ինչն էլ մնա միջոցառումների նպատակն է:

Լիագումար նիստն ամփոփիչ խոսքով եզրափակեց մեթոդիչի նախագահ Ն. Նալբանդյանը: Նա շնորհակալություն հայտնեց բոլորին՝ լրջորեն և մեծ պատասխանատվությամբ մեթոդիավորման նիստին նախապատրաստվելու և անցկացնելու համար:

Մեթոդիչի նիստն ավարտվեց Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի աշ-



ԹԱՐԻՎԵՐԴԻԱՆ ՕՐԵՐ

ԳԱՐՆԱՆ ԱՆՄՈՒԱՅ ԱՎՆԹԱՐԹՆԵՐ ԱՐՅԱՆՈՒՄ

Ապրիլի 21-26-ը Արցախում անցկացվեցին նշանավոր կոմպոզիտոր, ՌԴ ժողովրդական արտիստ, մեր հայրենակից Միքայել Թարիվերդիևի հիշատակին նվիրված միջոցառումներ:

Թարիվերդիան օրերը հազեցած էին բազմապիսի և բազմաբովանդակ միջոցառումներով: Այդ կապակցությամբ Արցախում էին կոմպոզիտորի այրին՝ Վերա Թարիվերդիևան և ռուս գրող, Արցախի բարեկամ Վիկտոր Կոնոպլովը:

Միջոցառումները մեկնարկել էին Քաշաթաղի շրջանում, Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում:

Թարիվերդիան օրերն Արցախում ներածական խոսքով բացեց միջոցառումների պատասխանատու-կազմակերպիչ Ռուբեն Օսիպովը: Դիմելով կոմպոզիտորի կնոջը՝ Վերա Թարիվերդիևային և Վիկտոր Կոնոպլովին՝ նա ասաց.

- Մենք ուրախ ենք ձեզ կրկին ողջունելու մեր արցախյան հողում, որտեղ սիրում են հայազգի ռուսական մեծ կոմպոզիտորի երաժշտությունը:

2008թ. Շուշիում կայացել է մեծ կոմպոզիտորին նվիրված միջոցառում, և այն ժամանակ Վերա Թարիվերդիևան ցանկություն էր հայտնել կրկին լինել Արցախում,

ու ահա կատարվել է նրա երազանքը:

Ապրիլի 22-ին «Կյանք՝ կյանքից հետո» վերտառությամբ գրական-զեղարվեստական միջոցառում կազմակերպվեց Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցում:

Ներկա էին ԼՂՀ Նախագահի խորհրդական Գրիգորի Գաբրիելյանցը, կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, պաշտոնատար այլ անձինք:

Հանդեսի վերջում տնօրեն Արթուր Լալայանը շնորհակալություն հայտնեց ուսուցչուհուն, աշակերտներին, նրանց ծնողներին՝ համագործակցելու, դպրոց-ուսուցիչ-աշակերտ ամուր կապի, իսկ աշակերտներին՝ գեղեցիկ հայերենով խոսելու, հասկանալու համար, կոչ արեց միշտ բարձր պահել իրենց մայրենին՝ խոսքն ավարտելով Չ. Սահյանի իմաստուն տողերով. «Ինչ ունենք էլ աշխարհում, Որ այսքան մերը լինի»: Ելույթ ունեցան դասվար Սուսաննա Բեգլարյանը, գրադարանավարուհի Սևիլա Լալայանը.

- Կարճ ժամանակում բանիմաց ուսուցչուհին կարողացել է վստահել ոչ միայն աշակերտների, այլև ամբողջ կոլեկտիվի սերն ու համակրանքը: Գնահատելի է երիտասարդ ուսուցչուհու ջանքերը երեխաների խոսքի զարգացման, գրաճանաչության գործում:

Ես մույնպես միանում եմ բոլոր մտաքննարկներին: Աղջիկս, մնում է մաղթեմ, որ յոթ գավակով սեղան մստես, իսկ գյուղական կյանքը ոչ թե զգալույթ լինի քեզ համար, այլ գաղափարախոսություն:

Քեզ բախտի երազ ճամփա, սաղափի կանաչ տերև ու արև, արև, արև...

Ավիլա ՔԵՎՈՐՑՅԱՆ
Թոշակառու ուսուցչուհի,
Քարահունցի հիմն. դպրոցի նախկին դասվար

ԱՐԴԵՆ ԳՐԱՃԱՆԱԿ ԵՆ

Օրերս կայացավ Դրախտիկի միջնակարգ դպրոցի 1-ին դասարանի աշակերտների «Այբբենարանի» հանդեսը: Այստեղ 1-ին դպրոցի շեմին ոտք դրած 9 աշակերտներ արդեն գրաճանաչ են: Իրենց Այբուբենի տոնը առաջին դասարանցիները



զարդարեցին ասմունքով, երգով, պարով ու բեմականացմամբ: Հանդեսի հետաքրքիր մասերից էր



ոտանավորներով իրար ներկայացնելը, որն աշակերտները կատարում էին ուրախ և արտահայտիչ: Հանդեսն ավարտվեց «Կարմիր գլխարկ» հեքիաթի բեմականացմամբ, որի ժամանակ աշակերտները դերակատարում էին հեքիաթի հերոսներին, իսկ Կարմիր գլխարկն իր հրաշալի արտասանությամբ, պարով ու գեղեցիկ շարժումներով առաջ էր տանում հեքիաթի ընթացքը:

Մարինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գ. Դրախտիկ

ՄԵՐՈՒՆՂ

ԱՐԵՎԻ ՊԵՏ ԶԵՐՄ ՈՒ ՊԱՅՆԱՂ

Ով է բերում գարունը: Բանաստեղծը կասի՝ ծիծեռնակը, հողի աշխատավորը՝ եղանակը, մեկ ուրիշը՝ ծնծադիվը, մեկն էլ, թերևս մեկ ուրիշ բան, իսկ ուսուցիչը՝ երեխաները և կավելացնի. որտեղ երեխաներ՝ այնտեղ մշտական գարուն:

Իսկ երբ երեխաները նաև գարուն են երգում, ուրեմն՝ գարունն արդեն իր տարերքի մեջ է:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցում գարնան հերթական տոն ստեղծեցին 6-րդ «բ» և 6-րդ «գ» դասարանների աշակերտները՝ իրենց դասղեկներ, ռուսաց լեզվի ուսուցիչներ Սնեժանա Սողոմոնյանի և Լիլյա Սարգսյանի գլխավորությամբ, երաժշտության ուսուցչուհի Սվետլանա Գրիգորյանի աջակցությամբ, ՄԿԱԳՏՏ Ժամանա Գրիգորյանի անմիջական ղեկավարությամբ:



Գարունը երջանկություն է, խաղաղություն, բերում է երգ ու խիճ, սեր, հույսեր, երազանքներ: Իսկ այդ ամենի ակունքում մայրն է, հայրենիքը: Երեխաները բանաստեղծական տողերով և երգով հայրենիքի գովքն են անում, մայրերին փառաբանում: Հայոց գրական ամոլաստանը նման գոհարների պակաս չունի: Եվ հպարտություն է, որ մեր փոքրիկները ծանոթ են և կարողանում են գեղեցիկ ներկայացնել: Եվ ոչ միայն այդ: Առանց հիացմունքի չի կարելի նայել Էլինայի, Անգելինայի, Աննայի հայկական ժողովրդական պարը, Վանեսա Բաբայանի քանոնի նվագը, դիտլահարների կատարումը, մեր պանդակապետ «Քոչարուկ» կողքին՝ իսպանական վալսը, Էդուարդ Միրզոյանի կատարմամբ՝ հայկական ու իտալական երգերը, Էթերի Սարգսյանի ասմունքը, երգը, պարը, դաշնամուրի նվագը, մյուսների կատարումները ոչ միայն հայերեն, այլև՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն: Դա կարծես յուրահատուկ հաշվետու համերգ էր, թե ինչ են սովորել երեխաները դպրոցում և արտադպրոցական խմբակներում: Իսկ որ նրանք օգտակար գործով են զբաղված դպրոցից դուրս՝ ակնհայտ է. գրեթե բոլոր աշակերտները հաճախում են արտադպրոցական որևէ հիմնարկ: Համոզված իրենց ելույթներով ավելի գեղեցկացրին 3-րդ դասարանից՝ վերոնշյալ ուսուցչուհիների աշակերտները:

Գարոնը այնքան ծաղիկ է վառել, Գարունը այնպես պայծառ է կրկին Ուզում են մեկին քնքշորեն սիրել, Ուզում են անուշ փայփայել մեկին...

ԳԱՐՆԱՆ ՊԱՐՏԵՋ

Եր հանդիսատեսին ինքնըստինքյան ժպտալ, ուրախանալ, ապրել գարնանային բերկրանք:

Միջոցառմանը ներկա էին դպրոցի տնօրենը, փոխտնօրենը, ուսուցիչներ, ծնողներ, հյուրեր:

Քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի ավագ մասնագետ Գրետա Գրիգորյանն արտահայտեց իր հիացմունքը և առաջին հերթին շնորհակալություն հայտնեց փոքրիկներին՝ որպես ապագա երեսասաններ: Իր գոհունակությունը հայտնեց միջոցառման կազմակերպիչներին՝ նշելով նրանց կատարած աշխատանքը: Իրոք, չափազանց հարուստ էր «Գարնան պարտեզը»:



Մեթոդիավորման մախազահներից իր սրտի ջերմ խոսքն ասաց Ռ. Օհանյանը: Նա մանուկներին պատգամեց լինել հայոց հողի փոքրիկ պաշտպաններ և միշտ հանդես գալ ինչպես գարնանային պարտեզի բացված ծաղիկներ: Այո, Արցախի սրբաբանած հողում թող միշտ գարունները գան ու չգան:

Այսօր հաճախ են կազմակերպվում տարաբնույթ հետաքրքիր միջոցառումներ, սակայն պետք է նշել, որ հ. 10 դպրոցում կազմակերպված իր որակով ու հարուստ նյութերով լավագույններից էր:

Կարինե ՄԿՐՏՉՅԱՆ ԱրՊՅ Լրագրության բաժնի 4-րդ կուրս

Ս. ՉԱՐԵՆՑԻ

Տոնական ու բարձր էր տրամադրությունը Ավետիք Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցում: Երկրորդ «գ» և «դ» դասարանների մանուկները հիացրին իրենց երգով, պարով ու ասմունքով:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի փոխտնօրեն Ա. Սարգսյանը: Ողջունելով հյուրերին ու ծնողներին՝ նա խորհուրդ տվեց մանուկներին լինել միշտ գարնանային տրամադրությամբ, քանի որ գարունը իր հետ բերում է բուրնուկ, թարմություն և մարդուն ենթագիտակցորեն տանում դեպի գարնանային արթնություն:

Համոզելով կազմակերպված էր դասվարներ Զ. Բաղդասարյանի և Գ. Գասպարյանի միահամուռ ուժերով:

Բենամիտություն տրամադրվում է փոքրիկներին, որտեղ նրանք հանդես եկան երգով, պարով ու ասմունքով: Ամեն մեկը օժտված էր դերասանական շնորհքով: Թե ինչպես էին փոքրիկները «մտել» դերի մեջ, միայն պետք էր տեսնել: Համոզման տեսնելով իրոք, իրեն զգում էր գարնանային պարտեզում: Յուրաքանչյուր մանուկն հանդերձանք համապատասխանում էր իր արտասանած թեմային:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի փոխտնօրեն Ա. Սարգսյանը: Ողջունելով հյուրերին ու ծնողներին՝ նա խորհուրդ տվեց մանուկներին լինել միշտ գարնանային տրամադրությամբ, քանի որ գարունը իր հետ բերում է բուրնուկ, թարմություն և մարդուն ենթագիտակցորեն տանում դեպի գարնանային արթնություն:

Համոզելով կազմակերպված էր դասվարներ Զ. Բաղդասարյանի և Գ. Գասպարյանի միահամուռ ուժերով:

Բենամիտություն տրամադրվում է փոքրիկներին, որտեղ նրանք հանդես եկան երգով, պարով ու ասմունքով: Ամեն մեկը օժտված էր դերասանական շնորհքով: Թե ինչպես էին փոքրիկները «մտել» դերի մեջ, միայն պետք էր տեսնել: Համոզման տեսնելով իրոք, իրեն զգում էր գարնանային պարտեզում: Յուրաքանչյուր մանուկն հանդերձանք համապատասխանում էր իր արտասանած թեմային:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի փոխտնօրեն Ա. Սարգսյանը: Ողջունելով հյուրերին ու ծնողներին՝ նա խորհուրդ տվեց մանուկներին լինել միշտ գարնանային տրամադրությամբ, քանի որ գարունը իր հետ բերում է բուրնուկ, թարմություն և մարդուն ենթագիտակցորեն տանում դեպի գարնանային արթնություն:

Համոզելով կազմակերպված էր դասվարներ Զ. Բաղդասարյանի և Գ. Գասպարյանի միահամուռ ուժերով:

Բենամիտություն տրամադրվում է փոքրիկներին, որտեղ նրանք հանդես եկան երգով, պարով ու ասմունքով: Ամեն մեկը օժտված էր դերասանական շնորհքով: Թե ինչպես էին փոքրիկները «մտել» դերի մեջ, միայն պետք էր տեսնել: Համոզման տեսնելով իրոք, իրեն զգում էր գարնանային պարտեզում: Յուրաքանչյուր մանուկն հանդերձանք համապատասխանում էր իր արտասանած թեմային:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի փոխտնօրեն Ա. Սարգսյանը: Ողջունելով հյուրերին ու ծնողներին՝ նա խորհուրդ տվեց մանուկներին լինել միշտ գարնանային տրամադրությամբ, քանի որ գարունը իր հետ բերում է բուրնուկ, թարմություն և մարդուն ենթագիտակցորեն տանում դեպի գարնանային արթնություն:

Լավ օրինակ

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽԱՉԵՆԻ ԳՊՐՈՋՈՒՄ

Ասկերանի շրջանի Խաչեն գյուղի Ղազարոս Աղայանի անվան միջնակարգ դպրոցը տարիներ շարունակ խելացի շրջանավարտներ է թողարկել: Կրթության և գիտության հանդեպ սերը խաչենցու մեջ գեներացրել է արմատավորված: Ակադեմիկոսներ Մևակ Արզումանյանը, Սերգեյ Սարիմյանը, Վլադիկ Առստամյանը և շատ ու շատ հայտնի անուններ, որոնք գիտության ասպարեզում անուրանալի ներդրում ունեն, այս գյուղի զավակներն են:

Ավանդույթն այս բարի շարունակվում է և այսօր: Դպրոցում ուսուցանող արտակարգակազմի աշխատանքները բարձր մակարդակի վրա են, ինչը պայմանավորված է բարեխիղճ և գործի նվիրյալ մանկավարժներով, ինչպես նաև պատասխանատու աշակերտներով:

Օրերս դպրոցում հերթական ուրախալի իրադարձությունն արձանագրվեց: 7-րդ դասարանի աշակերտ Յուրա Մարգարյանը, ով դպրոցում աչքի է ընկնում իր բարձր ակտիվությամբ ու պարտաճանաչությամբ, մասնակցելով առարկայական օլիմպիադային «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից, շրջանային փուլում նվաճեց երկրորդ տեղը: Ի դեպ նշենք, որ Յուրան մրցակցում էր իրենից բարձր տարիքային խմբի աշակերտների հետ: Հանրապետական փուլում ևս զբաղեցնելով առաջնակարգ տեղ՝ մասնակցեց նաև երևանում կայացած համահայկական փուլին: Յուրան արդարացրեց իր և բոլորիս սպասելիքները: Նա վերադարձավ հաղթանակով, որի համար երախտապարտ է իր ուսուցչուհուն՝ Արևիկ Գրիգորյանին:

Յուրա Մարգարյանի բերկրանքը համընդհանուր էր դպրոցականների համար: Ուսուցիչներն ու աշակերտները մեծ շուքով դիմավորեցին նրան՝ դպրոցի և գյուղի անունը բարձր պահելու համար: Դպրոցի դահլիճում կայացավ գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Յուրա Մարգարյանի հաղթանակին: Իր ելույթում դպրոցի տնօրեն Համեստ Հայրապետյանը, շնորհավորելով Յուրային, հորդորեց մյուս աշակերտներին՝ օրինակ վերցնել:

Դպրոցի ուսուցչական կոլեկտիվի կողմից Յուրային հանձնվեց դրամական պարգև, ծաղիկներ, իսկ ուսուցչուհի Արևիկ Գրիգորյանին շնորհակալական խոսք հղեցին արդյունավետ աշխատանքի համար:

ՕՖԵԼյա ԳՐԻԳՐՅԱՆ Խաչենի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն

ՂԱԳԻՎԱՆՔԻ ՀՈՎԱՆՈՒ ՏԱԿ

Կավայրերից տարեց ու մանուկներ պատրաստ են հյուրասիրելու հեծվից եկած ուխտավորներին:

Ներկաներին ոգևորեցին տարածքի տարբեր բնակավայրերի դպրոցականները՝ երգ ու պար: «Պարենք հայերեն» երիտասարդական մախաձեռնության մասնակիցներն իրենց շարքերն էին ձգում երեխաների, երիտասարդների և պարուն էին միասին հայոց «Քոչարին», այլ պարեր: Շուրջի Սկրիտի խանդավառ միջուկի անվան պետական թատրոնի (ռեժիսոր՝ Լեոնիդ Հարությունյան) դերասանները ներկայացրին Հովի. Թունմանյանի «Սասունցի Դավիթը»:



«Պարենք հայերեն» երիտասարդական մախաձեռնության անդամ Վիկտորյա Գասպարյանը տեղեկացրեց, որ իրենք եկել են երևանից: Համագործակցելով «Կարին» ազգագրական պարի համույթի հետ՝ խումբը նպատակ ունի մեր ժողովրդի մեջ ձևավորել ազգային պարերի ավանդական փոխանցումը սերնդեսերունդ: Ասաց նաև, որ իրենց առաքելության մեկնարկն սկսել են Քարվաճառից՝ մի քանի տարի առաջ և այս ընթացքում հասցրել են լինել Արցախի տարբեր վայրերում, այդ թվում և՛ Քաջաթաղում, Շուշիում, Գանձասարում: Շահունյանի շրջանում եղել են մի քանի բնակավայրերում՝ հատկապես երիտասարդությանը փոխանցել մեր պապե-

րի բարի ավանդույթները: Շուշիի պետադպրոցի դերասաններ Արմեն Հայրապետյանը՝ Մեծ Միեր, Վերոնիկա Հայրապետյանը՝ Դավիթ, Նվեր Դարաբեկյանը՝ Սուրա Մելիք, կամայք գեղեցիկ ներկայացրին «Սասունցի Դավիթը» ժպիտ ու հիացմունք պարզաբերով հատկապես մանուկներին: Եվ ինչպես Դավիթը վերակառուցեց իր հոր եկեղեցին, այնպես էլ եկել է ժամանակը, որ մենք վերակառուցենք ու սրբազորենք մեր ազատագրված հայրուրավոր սրբավայրերը: Դերասանուհի Կարմեն Բալասանյանն ասաց, որ այս ներկայացումը ճիշտ այսօրվա համար է:

Միջոցառման կազմակերպիչ, եղեգնուտ գյուղի դպրոցի ուսուցչուհի Մարիամ Փիլաֆյանը տեղեկացրեց, որ արդեն երկրորդ անգամ է կազմակերպվում նման միջոցառում՝ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի մախարարության, ինչպես նաև Շահունյանի շրջվարչակազմի օժանդակությամբ:

«Որպես Ջատիկ» փառատունը նպատակ ունի վերագտնել մեր ազգային արմատները: Այն ունի նաև դաստիարակչական նշանակություն, որ մեր սովորույթները վերընձուրվեն, - ասաց Մարիամը՝ ավելացնելով, որ բացի այս երկու փառատուններից, հեղինակային մախաձեռնությամբ կազմակերպել է նման միջոցառումներ Օմակահողում, Խաչմաչում:

Միջոցառմանը ներկա էին Շահունյանի շրջվարչակազմի աշխատակիցներ՝ վարչակազմի ղեկավար Վիտալի Դանիելյանի գլխավորությամբ, պաշտոնատար անձինք Ստեփանակերտից, շրջկենտրոններից, լրագրողներ: Հրաժեշտ ենք տալիս Դավիթյանի հավատով, որ մի օր ամբողջությամբ վերաշինված կտեսնենք երկուհազարամյա վանական համալիրը, և այնտեղ կմատուցվի Սուրբ Պատարագ: Ավելի շեն ու մարդաշատ կլինի Դավիթյանը բնակավայրը, իսկ մայրուհին, ձգվելով դեպի Վարդենիս ու Երևան, կլինի բարեկարգ:

Զ. ԸՈՔՈՅԱՆ

ՀԱՍՏ ՍԱՀՅԱՆ - 100

ՍԱՀՅԱՆ ԻՆՔԸ ԲՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Գրողի համար երջանկություն է, երբ իր ժողովրդի կողմից գնահատվում է կենդանության օրոք: Բայց առավել մեծ երջանկություն է, երբ իր մահից հետո ոչ միայն չի խուճանում, չի մոռացվում, այլև ժամանակի հետ գնալով արժեքն ավելի է մեծանում: Ուրեմն, նա անմահ է: Այդ երջանկներից է Համո Սահյանը, որը դեռ կենդանության օրոք դասական էր, իսկ այսօր՝ նրա 100-ամյակին՝ հազարամյակներն են բացվում նրա առաջ: Տարին Սահյանական է: Ուսումնական հաստատություններում և մշակութային օջախներում, անգամ փողոցներում նրա տողերն են թևածում:

կան կյանքի մուտքի համար հայ գրականության խոշորագույն դեմքեր Ստ. Ջրոյանը և Ն. Ջարյանը: Հետաքրքիր է «Նաիրյան դպրոցի» բանաստեղծության պատմությունը: Հ. Սահյանը Հայրենական պատերազմի տարիներին ռազմի դաշտում էր և այնտեղից ուղարկում է այս բանաստեղծությունը «Սիսիան» շրջանային թերթին և Ստ. Ջրոյանին: Շրջանային թերթի խմբագիրը ջղայնանում է՝ ասելով, թե՛ պատերազմ է, իսկ նա ի՞նչ է գրում: Ավելի լավ

նա մայր հայրենիքին: 1988 թվականի Արցախյան ազգային-ազատագրական շարժմանը նա նույնպես աստարտում էր: Դեռ 1987-ին նա եղավ Ստեփանակերտում, ծանոթացավ նրա բնակիչներին առօրյային: Միշտ ականջալուր էր Ղարաբաղից եկած նորություններին, ցանկանում էր, որ հաղթանակով ավարտվի նրա պայքարը, Շուշիի ազատագրումը մեծ ուրախություն պարզեց նրան: Եվ շատ էր տառապում, որ ջախել չէ և չի կարողանում ֆիզիկապես մասնակցել այդ պայքարին: Մ. Խաչատրյանը նրա խոսքերը մեջբերեց. «Բոլոր մարդիկ, ովքեր խոսում են հայրենասիրությունից, դեմքից-դեմքից, թող մի բան իմանան՝ միտինգային հայրենասիրություն մեզ պետք չէ, հայրենասերը նա է, ով գնում է իր գործին և լավ է անում իր գործը»:



Սահյանն ունի բանաստեղծություններ Ղարաբաղի մասին: Նրանցից մեկը՝ «Եվ նորից թափան մի ցեղ», արտասանվեց երեկոյին: ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, լրագրող Վարդգես Բաղդյանը մի հուշ պատմեց բանաստեղծի 75-ամյակին նրա հետ ունեցած հանդիպումից: Սայաթ-Նուվայի անվան երաժշտական ուսումնարանի ուսանող Մասիս Ալվանյանի կատարմամբ հնչեցին Հ. Սահյանի երգերը:

Սահյանն ունի բանաստեղծություններ Ղարաբաղի մասին: Նրանցից մեկը՝ «Եվ նորից թափան մի ցեղ», արտասանվեց երեկոյին: ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, լրագրող Վարդգես Բաղդյանը մի հուշ պատմեց բանաստեղծի 75-ամյակին նրա հետ ունեցած հանդիպումից: Սայաթ-Նուվայի անվան երաժշտական ուսումնարանի ուսանող Մասիս Ալվանյանի կատարմամբ հնչեցին Հ. Սահյանի երգերը:

Հէ՛ր զինվորների ոգին բարձրացնող մի բան գրեք: Բայց Ստ. Ջրոյանը ոչ միայն այդ բանաստեղծությունը տպագրում է «Խորհրդային Հայաստան» ամսագրում, այլև ուղարկում է Մոսկվա՝ «Պրավդա» թերթին, և դա մեծ արձագանք է ստանում: Հենց այդ ժամանակից էլ այդ բանաստեղծությունը հուզում է մեր սրտերը՝ որպես վառ հայրենասիրության արտահայտություն: Երեկոյին այդ երգը կատարեց երիտասարդ երգչուհի Դիանա Վանյանը:

Գրադարանի տնօրենն ավարտեց իր խոսքը: Եկավ դահլիճին լսելու պահը: Ուսուցչուհի Նաիրա Թամարյանի ելույթը գնահատանքի խոսք էր Մ. Խաչատրյանի հասցեին, որ կարողանում է նման միջոցառումներով ջերմացնել ընթերցողների սիրտը, բայց շնորհակալության մեծ բաժինը հայոց հանճարներին էր ուղղված, որ կարողանում են մեզ աշխարհից կտրել և այսպես նրանք մեզ պահեք պարզապես: Նրա խոսքն ու արտասանությունը շատ հուզիչ էին: Արտահայտեց իր հպարտությունը, որ տասնամյակներ շարունակ դպրոցում հայոց մեծեր է դասավանդել: Ու քանի դեռ նրանց խոսքը այսպիսի պատանիների ու պարմանուհիների, նորաստի տիկիների ու պլեներ մարդկանց բերանին է, ուրեմն՝ ոգու տոլը մեզ չի սպառնում, լավատեսություն հայտնեց վաստակաշատ մանկավարժը, ուրեմն՝ նմանները չեն կարող լավ մարդ չլինել, չեն կարող չարարել, պետականորեն չստանձնել, հոռի արարք կատարել: Հ. Սահյանը պատգամել է մեզ իր նման ազնիվ լինել հարաբերությունների մեջ, ծուլվել բնությանը, բնության նման անարատ լինել ու մարդու ու մարդկայինը վեր դասել ամեն ինչից...

Արտագաղթի տագնապը Հ. Սահյանին պարտել էր դեռ խորհրդային տարիներին: Առանձին ամիսներ էին այդ ժամանակ թողնում-գնում, նա նրանց համեմատում էր չվող թռչունների հետ: Ասում էր՝ երբ հայրենիքից հեռանում են, իրենց աչքերում տանում են հայրենիքի պատկերը, ջրվեժների, քարափների պատկերը, մասունքներ են տանում հայրենիքից: Միայն հայը կարող է սեփական մոխրում սեփական հոգին խորովել: Ես 1968թ. լույս տեսած նրա «Քարափների երգը» ժողովածուն անփոփում էր «Ախր ես ինչպես վեր կենամ գնամ» ծրագրային բանաստեղծությունը: Գրադարանի ակտիվ ընթերցող, դպրոցական Սուրենը հուզիչ արտասանում է այն:

ԱրՊՀ դասախոս Սիրուն Բաղդասարյանը Սահյանի երկու հայրենը ասում էր: Իսկ Սոկրատ Խանյանը, որն իր կյանքի լավագույն տարիները համարում է Բաքվում (որտեղ ինքը սովորել է) Սահյանի հետ ունեցած հանդիպումները, հուշեր պատմեց այդ մասին: «Ո՞նմանք ասում են, թե Սահյանն ինքնամոխի մարդ էր: Բայց նա ինքնամոխի էր աշխատելիս, իսկ ընկերական շրջապատում ուղղակի շշմեցուցիչ էր, անեկոտներ պատմող, շատ ուրախ մարդ էր: Նա բերեց բնության փիլիսոփայությունը և մարդու փիլիսոփայությունը: Սակայն հետո Հ. Սահյանը հայ պոետիկան բարձրացրեց այնպիսի մակարդակի, որ եթե Ալեքսանդր Բլոկը, որն ասել է՝ Իսահակյանի նման բանաստեղծ չկա Եվրոպայում, եթե կենդանի լիներ, Սակայն և Սահյանի մասին կասեք, որ աշխարհում նրանց նման բանաստեղծներ չկան»:

Սահյանը ոչ թե կապված էր բնությանը իր տոհմական գեներով, այլ հենց ինքը բնությունն է: «Այս իմ աշխարհն է, և ես էլ՝ նրա քարերից բուսած բանաստեղծ որդին»: Սահյանը «Քարափների երգը», «Սեզամ, բացվիր», «Իրիկանահաց» ժողովածուներով վերջնականապես նվաճեց մեր ժամանակների հայ բանաստեղծության բնության կալվածքները: Նա իր գեղարվեստական դավանանքը ձևակերպել է այսպես. «Անձնավորված, մարդացած բնություն և բնական մարդ: Միայն հավատալով հանգանակը կյանքում, արվեստի մեջ», - շարունակում է ներկայացնել բանախոսը:

«Իրիկանաստեղծությունները մեզ Սահյանի տխրությունը կամաց-կամաց վերածվում է լացի, որովհետև՝ «այդ մեծ գերդաստանից ինքն է լոկ մնացել իբրև վկա և իբրև հուշ», սակայն կյանքի իրիկանաստեղծում նա տխրելու և առավել ևս, լացելու պատճառ չունի, քանզի նա մեռել է, բոլորի սրտերում ու շուրթերին է: Միջոցառման կազմակերպչի այս լավատեսությունը բխում է բոլորի սրտից:

Եվ մեզ մեկին հաջողելով՝ երիտասարդ տղաներն ու աղջիկները գեղեցիկ ասումներ են Սահյանի՝ բնության մասին բանաստեղծությունները: Համո Սահյանի պաշտամունքներից ամենազվախալորը եղել է մայրենի լեզուն, նրա անաղարտությունը: Երբեք չօգտագործեց խրթին և բառարանային բառեր: Նրա համար ամենագեղեցիկ լեզուն այն էր, որով գրում էին Սեյրանը, Թուսնյանը: Եվ այնպես էր, որ Վ. Սեյրանը շուտ լքեց, եթե երկար ապրեր, մեր ոսկեդեմիկ լեզուն էլ ավելի կգեղեցկանար: Բնականաբար, հնչում է հայոց լեզվին մվիրված նրա բանաստեղծությունը («Մեր լեզուն»):

Հ. Սահյանի քնարերգության մի նշանակալի մասն են կազմում սիրո երգերը: Եվ հնչում են երգեր ու ասումներ նաև սիրո մասին:

Հ. Սահյանը հաճախակի է եղել Ղարաբաղում: Նա ցանկանում էր, որ Ղարաբաղի ժողովուրդը վերջապես միա-

ԱՆՍԱՀ ԵՐԳԻՉԸ ԱՆՍԱՀ ԲՆՈՒԹՅԱՆ

Հ. Սահյանի հորեյանը նոր թափ հաղորդեց դպրոցներում կազմակերպվող գրական միջոցառումներին, ինչն, անկասած, խթանում է ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունը:

Հ. Սահյանին, գետափին, ջրից նոր դուրս եկած տղեկի հետ զրուցելիս, որ քայլում էր իր մանկության արահետներով...

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցում կազմակերպված գրական-գեղարվեստական ցերեկույթը՝ 9-րդ «բ» դասարանի աշակերտների մասնակցությամբ, վկայեց, որ սահյանապաշտությունը գրականության ուսուցչից փոխանցվել է սովորողներին: Սահյանական մթնոլորտը զգացվում էր դպրոցի շենին ոտք դնելու պահից: Բովանդակալից վահանակին տեղ են գտել բանաստեղծի կյանքի դրվագների, ծննդավայրի լուսանկարներ՝ խոսում տողերով, նրա մասին ասույթներ: Իսկ դահլիճը վերածվել էր Սահյանի հայրենիքի՝ Սյունյաց աշխարհի մի փոքրիկ ջքնաղ կտորի: Միայն հուշերով, որ

«Ես չեմ հավատում» մայրամուտին,- ասել է Սահյանը: Սեզամից ոչ մեկը և հետո եկողներն էլ չպիտի հավատան Սահյանի մայրամուտին, ոչ միայն երբ ասում է՝ «Ինձ բացակա չդնեք», այլև՝ որ նա ներկա է ամեն քարի, ծառ ու ծաղկի, արտ ու հավքի, աղբյուրի ու գետի, սար ու թփի, լեռ ու քարափի, հողի, գերդաստանից միակը մնացած մարդու և նորածին մանկան, բոլորի մեջ: Նա մեր արյան կանչն է:



Բնության հետ առնչվելիս մարդ ինքնամաքրվում է, թևեր առնում. հոգեպես թեթևանում: Այդպիսի զգացում ապրեցինք սահյանական միջոցառումից, որովհետև Սահյան լսել՝ նշանակում է բնության ձայնը լսել, մաքրագործել... Ներկաների գնահատականները չափազանցված չէին: Քաղաքային մեթոդիկավորման նախագահ Ամայա Վանյանը համոզված էր, որ Սահյանի քննադատը, ի մասնավոր, հայացքը այդ պահին գոհունակություն էր արտահայտում, քանզի երեխաների շուրթերից այնքան մաքուր հայերեն

հնչում: «Հենց այդպիսի երեխաներն իրավունք ունեն ասել՝ մեր լեզուն մենք ենք, որ կանք, որովհետև թույլ, տկար լեզվով դա ասել՝ պատիվ չէ ոչ ուսուցիչների, ոչ էլ երեխաների համար»: Քաղաքապետարանի ԿԿ բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանը երեխաներին պատգամեց լինել Համո Սահյանի պես հայրենասեր, նրա պես սիրահարված հայրենի բնաշխարհին ու ծառայել նրան: Իսկ դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը ուսուցչուհուն և երեխաներին շնորհակալություն հայտնելուց բացի ինքն էլ երկխոսության մեջ մտնել բանաստեղծի հետ՝ հիշեցնելով, որ Արցախյան շարժման առաջին իսկ օրերից Ստեփանակերտի իրապարակում հանրահավաքների մասնակիցներին ոգեշնչող ուժ են տվել Սահյանի հայրենասիրական բանաստեղծությունները, իսկ նրա «Ախր ես ինչպես վեր կենամ, գնամ»-ը դարձել էր յուրատեսակ հիմն և հնչում էր բոլորի շուրթերից:

Ներկաներին՝ քաղաքի դպրոցների ուսուցիչներին, ծնողներին, հյուրերին ոգևորել էր այն, որ դասարանի բոլոր աշակերտներն էին մասնակցում, և որ աղջիկներից առավել լավ և ոգեշնչված տղաներն էին արտասանում (որը հազվադեպ է լինում). որ երեխաները այդքան շատ բանաստեղծություն գիտեն Սահյանից: Անշուշտ, դա շնորհաշատ ուսուցչուհու տրեմանք, սիրով ու նվիրումով կատարած աշխատանքի արդյունք է: Շուտով այս երեխաները իրաժշտ կտան հիմնական դպրոցին: Նրանց մի մասը կգնա ավագ դպրոց: Եվ հասկանալի էր միջոցառմանը ներկա՝ հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մամուշ Բալայանի ցանկությունը՝ նրանց տեսնել իրենց դպրոցի հումանիտար հոսքում... Քիչ հետո տեսնում ենք իրեն՝

ՀԱՅՈՑ ԵՂԵՈՆ - 99

ԴԱՍ ՀԱՅՐԵՆՅԱՑ

«Ինքնապաշտպանական մարտերը 1915 թվականին... սա էր Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի 8-րդ դասարանում տեղի ունեցավ համաքաղաքային բաց դասի թեման հայոց պատմությունից (ուսուցչուհի՝ Վ. Ավետիսյան): Դասասենյակը կահավորված էր համապատասխան պատմաբանությամբ, քարտեզներով, 1915 թվականի Մեծ եղեռնին զոհ դարձած մեր մեծերի՝ Սիամանթոյի, Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Կոմիտասի նկարներով: Դիմացի պատին Անատոլ Ֆրանսի տողերն էին. «Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի. նրան մնացել է շատ քիչ բան՝ թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ»:



Մանրամասն բնութագրեցին 1894-1896 և 1915-1916թթ. հայերի ցեղասպանության հետևանքով մեր ժողովրդի կրած մարդկային, նյութական և բարոյափոքեցման կորուստները, հիմնավորված կարծիք հայտնեցին Հայկական հարցի միջազգայնացման հայության կյանքում ունեցած հետևանքների մասին: Դասը դաստիարակչական մեծ նշանակություն ուներ: Ուսուցչուհու նպատակն էր, որ աշակերտները կարողանան գիտակցել, թե 1915 թվականը ոչ միայն մեծ ողբերգության, այլև հերոսական մաքառումների տարի է՝ հանուն ֆիզիկական գոյության և արժանապատվության, ըմբռնել ցեղասպանության դատապարտման և ճանաչման նշանակությունը մեր ժողովրդի պատմական ճակատագրում, ընդունել 1915 թվականի հերոսամարտերը որպես թուրքական բռնությունների ու կոտորածների դեմ ուղղված պայքար, որպես ինքնապաշտպանության դրսևորում, հասկանալ, որ միայն զենքը ձեռքին է հնարավոր հասնել հաղթանակի՝ գե-

րադասելով պատվով մահը ողորմածությունից և ստրկությունից, գնահատել և արժևորել ինքնապաշտպանական կռիվների դերն ու նշանակությունը հայ ժողովրդի գոյատևման համար մղված պայքարում: Ուսուցչուհին արդիականացրեց թեման՝ այն կապելով 20-րդ դարի վերջին և այսօր Քեսաբում տեղի ունեցող իրադարձությունների հետ: Կոչ արեց լինել նախնիներին արժանի սերունդ, հարգել 1,5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը և մինչև վերջին շունչը պայքարել կորցրած հողերը հետ վերադարձնելու համար:

Նոր դասին անցնելուց առաջ հնչեցին ամփոփիչ հարցեր: Աշակերտները ձևակերպեցին, թե ինչ են հասկանում Հայկական հարց ասելով: Մեջբերեցին Խրիմյան Հայրիկի տողերը. «Բեռլինի մեջ բոլոր հպատակ ազգերին հոգեճաշ հարիսա էին բաժանում: Ինձ ուղարկել էիք, որ հայերին հասնող բաժինը վերցնեմ բերեմ: Բոլորը երկաթե շերտով վերցրին տարան իրենք բաժինը, իսկ իմ շերտիսը թողեց էր, որը հարիսայի մեջ լիճվեց, ընկավ մեջը: Ինձ ոչինչ չհասավ, և ես ձեռնունայն վերադարձա»:

Հատվածներ արտասանեցին Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպից (ներկայացրին Վասպուրականի անկման պատմությունը, որը դրախտ էր, բայց դժոխք դարձավ), Պարույր Սևակի «Անլուրի գանգալատուն» պոեմից: Հնչեցրին Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջադեմ գործիչների վկայությունների տողեր:

Ուսուցչուհուն հաջողվեց խորացնել սովորողների ինքնուրույն մտածողությունը, ընդլայնել մտահորիզոնը, հարցերի միջոցով կենտրոնացնել նրանց ուշադրությունը, նպաստել նրանց մտքի, կամքի, վճռականության ու համառության զարգացմանը:

Որպես տնային աշխատանք հանձնարարվեց կազմել T-աձև արյունասկզբապաշտպանական մարտերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին»:

Նանար ՍԻՄՈՆՅԱՆ
Սրբեկ. հ. 6 հիմն.
դպրոցի ԱԳԳ կազմակերպիչ

«ԱՊՈԹՔ ԱՌ ԱՍՏՎԱԾ»

Եղեռնի 100-ամյակին
Հոգուս խառնարանում մխում է ցավը՝
Գործող հրաբուխ,
Եվ օրերի հետ հանգչում է հույսս՝
Չհանգած հրաբուխ...
Եվ տողերիս մեջ եռում է լավան՝
Տառապանք այրող...
Եվ հրաբուխը ողբերգությունը
Տանցում է հոգիս՝ ցավիս հետ ցավոտ՝
Հայոց մեծ եղեռն երկրաշարժ ահուտ...
Մտքերիս բորբոք ժայթքարանում
Ըմբոստանում է ահավոր մի ճիչ
Ընդդեմ աշխարհի անտարբեր խղճի...
Մեկ-մեկ երագիս տեսիլաժամին
Աչքերով քնատ, տեսնում եմ՝ Աճին
Իմ ավերակված վանքերով գամված՝
Լուռ ու ծխամած՝ մոմերով հանգած...
Մեկ-մեկ էլ՝ Մուսա լեռան քաջերին,
Որ ոյուցազնաբար կռվելով անահ,
Ելան գողգոթա՝
Պարզելով դորձ միաբանության՝
հանուն հայ ազգի...

Ով որ ուզում է՝ թող ինձ հետ քայլի,
Գնանք մենք ուխտի Ավետյաց երկիր,
Խնկարկեմք արդոք խնդրանքով վերին,
հավատով խորին,
Որ մեր խոշտանգված մտքերից հանի
Եղեռն կոչվածը...
Գնանք մենք այցի անապատը այն
Գորշ գերեզմանոց,
Որ Տեր թե՛ Դեր-Չոր են անվանում մարդիկ...
Մոմավառություն պետք չէ մեզ այնտեղ՝
Այնտեղ վառվում են՝ մեկ ու կես միլիոն
Մյուսեր կարոտած, գունաթափ և մեր
Ապրողներիս հեզ՝ հոգիները կեզ...
Եվ... ֆոսֆորային լույսերում պարող՝
Ոսկրակույտեր ընկած ցիր ու ցան...
Պարում են, պարում քանուց խելագար,
Ոտքերով պայտած՝ խելագար մի պար՝
Ցավից տնջում է ազգը մեր հայոց...
Հանգրուտ աշխարհ, մեր սիրտը լավոր
Կրակը բորբոք...
Մի՞թե չես տեսնում սպասումի ցավից
Մեր հարյուրամյա, չորցած, անարցունք
Աչքերի լացն ու կակիճը այրող...

Երթանք մեր երգիր մեզ հետ տանելով
մեր հայրությանյա հավածանքների
Ողբը ճմրթված...
Մեր Կոմիտասի մրմունջը ցավի,
Որ փշաքաղման ցանցեր ունի...
Եվ հավաքելով մեր անդրապան
Երագանքների մասունքները ողջ,
Սոսնձեք իրար մեր հոգիներում.
Գուցե մեր կյանքոտ խորը հավատի
Չմեռնող հույսի մաքուր արդոքով՝
Աստված շունչ կտա մեր ծեր սպասումին...
«Աղոթք առ Աստված» մի ժողովրդից,
Որ Գեղարդ ունի՝ հանված քո կողից
Եվ իր տքնաջան հողոտ ձեռքերով
Չեռակերտ վանքի տեսքով կառուցած
ժայռափոր մտքի խոր խորխորատունում,
Որ առաջիններից առաջինը եղավ
Քեզ թարգմանելու գրեթե մեր հայ,
Շտկիր սխալը անողոք դարի,
Որ դաս չդառնա
Դառն հուշագիր մի ուրիշ ազգի
ժակատագրին՝ Տեր իմ երկնային:
Ներիր, Տեր, ներիր խնդրանքս արի,
Դու ընտրեցիր կյանքի ճշմարիտ
Նավամատուցը, որ Արարատի
Բարձրության վրա խաբիսխը ձգի
Տապանը Նոյի...
Երկրապաղծեցիր մի ժողովրդից,
Որ անկրկնելի ոճով հոյակերտ
Գանձասար ունի,
Խոր Վիրապ ունի և ողջ հայության
Հույս ու ապավեն սուրբ Եջմիածին...
Փառք քեզ, երկնային, որ տվել էս ինձ
շնորհ աղոթքի, գրի և երգի,
Որ հղում են քեզ նամակն իմ արտի՝
խնդրանքով խորին և խոնարհունի
Դողով սրբազան,
- Մի՞ թող բոլորի հայրությանյալը
Այն սև եղեռնի, որ իրագործվեց
Հայ ազգի հանդեպ յաթաղանով կեռ...
Շրջիր մեղավոր՝ մտքերիս ժանգոտ,
Եվ գրեթե այն՝ մութ կնիքներով՝
Գավաթը քո հին եռացող ցամառ,
Որ իրագործվեց և կիրառվեց
Ընդդեմ մարդկության...
Դեր-Չորում կրկին աղաղակում են
Մեկ ու կես միլիոն հոգիները հայ...
Քեսաբում նորից նույնն է կրկնվում
Տեր իմ երկնային...
Նորից վանքերում քո աստվածային
Մոմեր են վառվում, հնչում աղոթքներ,
Մեր տեղահանված սիրիահայերի,
Նեղված մեծ հոգու կնճռոտ ձեռքերից...
Նորից՝ մեղա տեր՝
Մաքրիր ուղեղները մեր մանուկների
Մոժավանցեցիր խճճված ցանցից՝
Տեր իմ ճշմարիտ՝
Նոր սերունդ ցանիր հայոց դաշտերում՝
Առանց որմնի...

ԱՅԼԵՎՄ՝ ԵՐԲԵ

Արցախի մատաղ սերունդը հայկյան ոգու կրողն է: Ամեն անգամ հպարտության այս զգացումն են ապրում՝ ներկա գտնվելով հանրապետության ցանկացած կրթօջախում կազմակերպված հայրենասիրական միջոցառման, առանձնապես այն օրերին, երբ ազգովի խնկարկում ենք Հայոց մեծ եղեռնի նահատակների հիշատակը:

Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի սովորողները գրական-գեղարվեստական միջոցառումով իրենց ուրույն ներդրումը բերեցին հայոց արդար դատի իրականացմանը: Կազմակերպիչը դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդ-միավորման նախագահ Ռուզաննա Աբրահամյանն էր, ով եղել է մեր պատմական հայրենիքում և տեսել, թե ինչպես բնիկ ժողովրդին՝ հայերին հայրենագրված և նրա հողերին տեր դարձած բիրտ ու վայրենի ազգը այսօր իր պետության՝ Թուրքիայի ամեն մի բլրի, ամեն բարձունքի իր դրոշմ է դրել ու մեծ տառերով գրել՝ «Սա մեր հողն է»: Ասում է՝ երկիր իրենք էլ են վախենում և համոզված են, որ այդ հողերն իրենցը չեն, դրա համար էլ գրում են: Իսկ մենք մեր բոլորի հոգիներում ու մեր բոլոր բարձրաբերձ լեռների կատարներին պիտի քանդակենք Նժդեհի խոսքը. «Եթե թուրքից նույնիսկ մոխիրը մնա, այդ մոխիրից էլ պիտի մեր Դատը պահանջենք»:

Ապրիլի 24-ը համազգային սզո օր է: Բայց մենք չպիտի լաց լինենք, կացելը օգուտ չի տա: Խնկարկելով մեր շուրջ երկու միլիոն անմեղ զոհերի հիշատակը՝ ի լուր աշխարհի հայտարարում ենք, որ նրանք մեր արմատներն են, արյան կանչը, հիշողությունը, իրավունք չունենք նրանց մոռանալու, որովհետև նրանք սուրբ հիշատակ են թողել

մեզ՝ մեր արդար Դատը և հատուցումը:

Այդ էր ատում աշակերտների հուզիչ ասումները, Հայոց քանքարավոր եղեռնագարկ գողներ Վարուժանից, Սիամանթոյից, Զոհրապից, եվրոպական առաջադեմ մտածողներից, Պարույր Սևակից և մեր մյուս գրողներին:



րից, ինչպես և երգն ու պարը: Ցեղասպանությունը, ցավոք, միայն պատմությունն է: Այն այսօր էլ իրողություն է նույն այդ ազգի կողմից: Եվ նրանց այսօրվա քաղաքական գործիչները լավ են յուրացրել իրենց նախորդներից մեկի այն խոսքերը, թե հայ ժողովրդին պետք է իսպառ ոչնչացնել, որպեսզի երկրագնդի վրա հայ չմնա, Հայաստանը վերանսա. «Մենք իրապ պատերազմում ենք, և չկա ավելի բարենպաստ հանգամանք, քան դա: Մեծ տերությունների միջամտությունը ու մամուլի բողոքները ուշադրության չեն արժանանա, եթե անգամ դա պատահի, այդ գործն ավարտված փաստ կլինի ընդմիջտ»: Նրանց այս մտածելակերպն այսօր էլ գործունեության ծրագիր է, ինչի վկայությունը Քեսաբն է:

Բայց այն ժողովուրդը, որը չի ուզում մեռնել, չի մեռնի: Նրա երակներում մնացած քիչ, բայց թանկագին արյունը բարձր հերոսներ կծնի, նվաղում է Հայաստանը, բայց նա

կվերածնվի: Սա էլ եվրոպական մեծ մտավորականներից մեկի գնահատականն է հայերի մասին: Իսկ մեր անմահ պոետ Վահան Տերյանը ցավի միջից ճչացել է.

*Բարբարոսներ կզան ու կզնան անհետ,
Արքայական մեր խոսքը կմնա հավետ...*

Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամեն քար...

*Եզրիպտական բուրգերը փոշի կդառնան,
Արևի պես, երկիր իմ,
կվառվես վառման,*

*Որպես փյուռիկ կրակից կելնես,
կելնես նոր,*

*Գեղեցկությանը ու փառքով՝
վառ ու լուսավոր:*

Այսպես երեխաների տրտմագին խոսքերն աստիճանաբար ստանում են ոգեշունչ հնչերանգներ, առանձնապես՝ երբ հասնում են 1988-ին, երբ նորեն հայը բարձրացրեց գլուխը, քնած առյուծ արթնացավ, մոռնչաց, և իրենից վանեց մորթվողի և թույլի տկար մտածողությունը:

Այսօր, սակայն, մեզ հրամցված մարտահրավերը յաթաղանի տեսքով չէ: Կա նաև մեկ այլ պատերազմ, որը պակաս դաժան չէ՝ հայրենիքը կամովին թողնելը: Եվ երեխաների շուրթերով հնչում է. «Հայեր, դեպի Հայաստան, դարեր գաղթել ենք, հիմա՞ էլ գաղթենք, երբ ունենք անկախ պետություն...»:

Ներկաները՝ ԿԳՆ, կրթության բաժնի, քաղաքի դպրոցների ներկայացուցիչները բարձր գնահատեցին երեխաների և ի դեմս նրանց՝ մատաղ սերնդի ազգային մտածողությունը. մենք պահանջատեր ենք, պիտի վերադարձնենք մեր պատմական երկիրը և չպիտի թույլ տանք նոր Ապրիլի 24:

Վ. ՉԱԲՐԻԵՆՅԱՆ

Ջոյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄՐՅՈՒՅԹ

Մարզական

«ԱՐԺՎԻԿ»-ՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՄ

Ավարտվեցին հերթական «Արժվիկ-2014» ավանդական ռազմաճակատական խաղերի հանրապետական մրցումները...

ու թեժ մթնոլորտում: Չնայած որոշ թիմերի մասին կարելի է խոսել վերապահումով...



Մրցումների մեկնարկին թիմերի պատրաստության մասին ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Ս. Հակոբյանին զեկուցեց ԼՂՀ ՊՆ ՌՀԳ և ՀԿՀԿ բաժնի ավագ սպա, մայոր Գ. Օհանջանյանը:

Բացելով հանրապետական մրցումներին նվիրված հանդիսավոր արարողությունը՝ կրթության և գիտության նախարարության ՌՀ, ՖԳ և ՀԿՀԿ բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը հույս հայտնեց, որ հանրակրթական դպրոցների նախադրարկչային տարիքի դպրոցականների միջև մրցումները կլինեն զեղեցիկ նվեր Սայիսյան եռատոնի նախօրեին:



Մրցումների մասնակիցները և ներկայացրած թարմ ծառայողները հերթին Վազգեն Սարգսյանի հուշարձանին:

«Արժվիկ»-ներին ուղղուցեց կրթության և գիտության նախարար Ս. Արայանը: Դիմելով պատանի մարտիկներին՝ նախարարը վստահություն հայտնեց, որ հանրապետական փուլի առաջնության մասնակիցները կդրսևորեն ուժեղ կամային հատկանիշներ, կցուցադրեն այն ունակությունները, որոնք ձեռք են բերել ուսումնական գործընթացում, կպայքարեն հանուն թիմի հաջողության ու հաղթանակի, հանուն վաղվա հաղթանակների, որ նրանցից ակնկալվում են:

Ողջունելով մրցումների մասնակիցներին՝ ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Ս. Հակոբյանը նշեց, որ բոլոր թիմերի մասնակիցներն արդեն հաղթողներ են, ու կարևորեց նման մրցումների անցկացումն ապագա հայրենիքի պաշտպանի համար անհրաժեշտ որակների ձեռքբերման նպատակով և որպես կարևոր ռազմահայրենասիրական միջոցառում՝ դպրոցականների շրջանում:

Ելույթներին հաջորդեց «Արժվիկ»-ների հանդիսավոր երթը, իսկ մրցումները մեկնարկեցին վիճակահանությանը: Եռօրյա մրցապայքարը ջոկերի միջև անցավ բուռն

վա աշակերտի համար նշանակում է հաղթանակը վաղվա զինվորի:

Բոլոր ջոկերը ներկայացել էին ԼՂՀ կառավարության աջակցությամբ ձեռք բերված «Արժվիկ»-ների համագլխատով:

Եռօրյա համառ մրցապայքարում երկրորդ տարին պատվավոր առաջին տեղը զբաղեցրեց Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի ջոկը, երկրորդ տեղը՝ Հարությունի Ս. Մանվելյանի անվան, երրորդ տեղը՝ Մարտունու շրջանի Թաղավարդի միջնակարգ դպրոցների ջոկերը:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը ԼՂՀ պաշտպանության, կրթության և գիտության նախարարությունների կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների և թանկարժեք նվերների, իսկ թիմերի բոլոր անդամները և հաղթող թիմի մարզիչները կրթության և գիտության նախարարության կողմից՝ նաև դրամական

պարգևների:

Պաշտպանության նախարարության կողմից պարգևատրումները կատարեց ու հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ՝ գեներալ-մայոր Ա. Դահրամյանը:

Քաղաքաշտպանության մրցածներում հաղթող ճանաչված՝ Մարտունու շրջանի Թաղավարդի, Ստեփանակերտի հ. 11 և Շուշիի շրջանի Քարին տակի դպրոցների ջոկերը պատվոգրերով և թանկարժեք նվերներով պարգևատրվեցին ԼՂՀ ԱԻ ծառայության կողմից: Պարգևատրումները կատարեց ԼՂՀ ծառայության պետ՝ գնդապետ Ա. Հարությունյանը:

Շարային պատրաստությունից և հրաձգությունից լավագույն ցուցանիշներ ցույց տված երկուական տղաներ ու աղջիկներ թանկարժեք նվերներ ստացան Արցախի ազատամարտիկների միության կողմից:

Պարգևատրումները կատարեց ԱԱՄ աշխատակազմի ղեկավար Ռ. Բաղդյանը:

Եղան և անհատական պարգևատրումներ:

Անհատական հաշվարկով մրցանակային տեղեր գրաված էդուարդ Անդրյանը (Հարություն), Արկադի Սաֆարյանը և Նվեր Մաջարյանը (Թաղավարդ) պարգևատրվեցին համապատասխան կարգի պատվոգրերով և դրամական պարգևներով:

Պատվոգրեր և թանկարժեք նվերներ ստացան նաև հրաձգությունից, շարային պատրաստությունից, ԿԼ-ի ոչ լրիվ քանոնահավաքում և պահեստատուստի փիլիցքավորում, ֆիզիկական պատրաստությունից և քաղաքացիական պաշտպանությունից լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները, ինչպես նաև լավագույն ջոկի հրամանատար էդուարդ Անդրյանը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարգևատրումները կատարեց նախարար Ս. Արայանը: Նա շնորհավորեց հաղթողներին և շնորհակալություն հայտնեց մրցումների մասնակիցներին ակտիվ մասնակցության և հանուն թիմի հաղթանակի կամային բարձր հատկանիշների դրսևորման համար:

Պատանի «Արժվիկ»-ներն ու հանրապետական առաջնության կազմակերպիչները հրաժեշտ տվեցին իրար՝ եկող տարի կրկին հանդիպելու ակնկալությամբ և մրցակցության ոգին անշեղ պահելու ցանկությամբ ու մտայնությամբ:

Մուրադ ՇԱՐԱՍԱՆՅԱՆ

«ԴԵՂ, ՁԵՋ ՏԵՄՆԵՔ, ԱՂՋԻԿՆԵՐ»

Ասկերանի միջնակարգ դպրոցում, ուսուցմանն ու դաստիարակությանը զուգահեռ, ամեն կազմված տարաբնույթ միջոցառումներ՝ մշակութային, մարզական, ժամանցային և այլն: Հերթականը տեղի ունեցավ օրերս, Ասկերանի մշակույթի տանը: Այն նախաձեռնել էին դպրոցի 7-րդ և 8-րդ դասարանների ռուսաց լեզվի ուսուցիչները: Միայն ինչու «Դեհ, ձեզ տեսնենք, աղջիկներ» մրցույթի «պաշտոնական» լեզուն ռուսերենն էր: Չնայած կանանց տոների միանշանակ արդեն ավարտվել է, բայց աղջիկները շարունակում են «գրոհել» և անանց

ուրախության պահեր պարգևել: Մրցահարթակ դուրս եկան 7-րդ դասարանի աղջիկներից կազմված և 8-րդիների թիմերը:

Գեղեցիկ զարդարված բեմ, համապատասխան հագուկապ, սանրվածք, ու այս ամենը՝ աշակերտուհիների ու նրանց ուսուցիչների ջանքերի շնորհիվ:

Ողջույն, ժամանակակից պար, աղանների մրցույթ, մազերի հարդարում, նորաձևության ցուցադրում, ծաղկեփնջի դիզայն, տնային առաջադրանք (որի թեման խաղաղությունն էր), ժամանակակից երգի կատարում. սրանք էին մրցող թիմերի առաջադրանքները:


Երկու թիմերն էլ իրար առաջանցելով, փորձում էին հասնել հաղթանակի: Ազատություն տալով իրենց երևակայությանը՝ աղջիկները փորձում էին թթափել երկչոտությունը, և դա շատ դեպքերում նրանց հաջողվում էր: Ամենքը յուրովի ակտիվ էին, նախանձախնդիր, սակայն եթե կա մրցույթ, կան նաև հաղթողներ ու պարտվողներ:

Ինչևէ, մրցույթը կայացավ՝ գեղագիտական հաճույք ու հաճելի պահեր պարգևելով ներկայից: Հաղթող ճանաչվեց 8-րդ-ցիների թիմը: Պարգևատրումը կատարեց դպրոցի տնօրեն Կ. Մայիլյանը: Նա պարգևի արժա-

նացրեց նաև միջոցառման անձնակազմի մասնակցին: Հավելենք, որ «Դեհ, ձեզ տեսնենք, աղջիկներ»-ը հաջողություն ունեցավ նաև հանդիսավարի՝ դպրոցի փոխտնօրեն Աիդա Գյանջույանի շնորհիվ: Հանդիսականների ջերմ ընդունելությանն արժանացավ նաև Իրինա Փիրումյանի հեղինակած «Ողջ աշխարհում մենք միասին ենք» երգը: Այն խաղաղության յուրօրինակ գովք էր աշակերտների շուրթերից և պատասխան, թե ինչու է անհրաժեշտ այդքան բաղձալի խաղաղությունը:

Սիրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ

խոսք հիշատակի ԻՆՆՍՈՒՆԱՅԱ ՌԻՍՈՒՅԻՉԸ ՀՐԱՊԵՏՑ ՏՎԵԹ ԱՆԽԱՐՀԻԿ ԿՅԱՆՔԻՆ (Ողորմի նրան, հազար ողորմի)



Ա շ խ ա ռ հ ի կ կյանքին հաշտ ու խաղաղ հրաժեշտ տվեց բազմամյա մանկավարժ, ճակատին մեռն, պատմության մասնագետ, զավակներին նվիրյալ ծնող Սերոբ Ջինավորի Սաղյանը: Նա բարությանը էր հիշում անցյալը ու միշտ ասում էր՝ ողորմի

հորս, ողորմի նրա ծնողաց՝ Ջավադին, Սաղուն, Մելքունին, Նավասարդին... Ափսո՛ս, մնացածին չենք հիշում...

Ծնվել է 1924թ., Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: Յոթնամյակն ավարտելուց հետո ուսումը շարունակեց հարևան Հաթերք գյուղում: Որպես լավ սովորող՝ 1944-48թթ. բարձրագույն կրթություն ստացավ Բաքվում՝ Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնում: Անասելի դժվարություններ հաղթահարելով՝ բուհն ավարտելուց հետո վերադարձավ ծննդավայր (ավագ եղբայրը՝ Արարատը, մասնակցել էր պատերազմին, իսկ իրեն բանակ չէին տարել փոքր հասակում ջարդված արմուկից տուժած թևի պատճառով): Ուր ուղարկում էին, անմռունչ գնում էր աշխատելու: Առաջին տարին ծննդավայրում, այնուհետև՝ Հաթերքում, կարճատև՝ Վաղուհասում, որից հետո՝ Հարությունագոմերում աշխատեց սկսման ուսուցիչը: Այնուհետև մշտական աշխատանքի անցավ Չափարի միջնակարգ դպրոցում՝ համատեղելով Ջարդախաչի ութամյա դպրոցում աշխատանքը՝ 1953-1992թթ.: Արցախյան գոյապայքարի ժամանակ բռնագրավված ծննդավայրը թողնելով՝ ապաստանեց Ստեփանավանի շրջանի Մաքսիմ Գորկի գյուղում՝ աշխատելով որպես պատմության ուսուցիչ 1993-94թթ.: Հարազատ գյուղն ազատագրվելուց հետո վերադառնում է դպրոց, մեկ տարի աշխատում, այնուհետև անցնում թոշակի՝ նվիրվելով գյուղատնտեսական աշխատանքներին ու ավերված տան վերակառուցմանը: Սերոբ Սաղյանը նաև խնջույքների, հարսանյաց հանդեսների, սզո սեղանների հմուտ կառավարող էր, արցախյան համով-հոտով բառ ու բանի անզուգական կիրառող: Հացով մարդ էր: Նրա սեղանին շատ են նստել նույնիսկ գիտության կաճառի աշխատողներ՝ ակադեմիկոսներ:

Չորս զավակների՝ Նահրային (մանկավարժ), Բենիկին (գինեգործ), Աշոտին (թիմիկոս), Լիլյային (մանկաբույժ), ապահովել է բարձրագույն կրթությամբ: Երկրորդ զավակը՝ Աշոտ Սաղյանը, ակադեմիկոս է, համաշխարհային մակարդակով ճանաչված դեմք:

Սերոբ Սաղյանը, աշխատասեր անձնավորություն լինելով, հմուտ ու բարեկիրթ ուսուցիչ էր, ազնիվ քաղաքացի, արցախասեր հայ, նվիրյալ ամուսին (տիկինը՝ Սոնան, տնային տնտեսուհի էր ու հիմա՝ օր ծերության, զավակների խնամքի տակ է): Նա այն եզակի ուսուցիչներից էր, որի հուղարկավորությանը մասնակցեցին գիտության կաճառի անդամները: Սերոբ Սաղյանի հիշատակը վառ կմնա կրտսեր մանկավարժ ընկերների, համագյուղացիների, նրան ճանաչողների սրտերում:

Մարտակերտի շրջանի Չափար գյուղի միջնակարգ դպրոցի մանկավարժներ, տնօրեն, գյուղական համայնք

ԼՈՒՍԱՐԱՐ համագործակցություն: Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ. Մտեփանակերտ, Գ. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info. Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոտ» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 02.05.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: